

Կիպրահայ

Ընդունելութիւն Ի Պատիւ ՀՀ Խորհրդարանի Նախագահ Տիար Գալուստ Սահակեանի եւ Իր Ճրախումբին

1 Ապրիլ 2015-ին, կ. ե. ժամը 6:00-ին, Կիպրոսի Թեմի Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Տիար Գալուստ Սահակեանի եւ իր շքախումբին հանդիպումը կիպրահայութեան ներկայացուցիչներու հետ:



Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Երեսփոխանական Ժողովի Նախագահ Տիար Սեպուհ Դաւիթեան, որ բարձր արժեւորեց ՀՀ Ազգային Ժողովի պատուիրակութեան պաշտօնական այցը Կիպրոս, առաւել եւս սերտացնելու համար Հայաստան-Կիպրոս կապերը՝ Հայկական Յեղասպանութեան 100-րդ տարելիցին: Ան գնահատեց

յատկապէս՝ յոյն, ասորի ժողովուրդներու ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը ՀՀ Ազգային Ժողովին կողմէ վերջերս, ինչպէս նաեւ Կիպրոսի Խորհրդարանի քուէարկելիք օրինագիծը՝ Յեղասպանութեան ժխտումը պատժելի արարք նկատելու գծով: Պրն. Դաւիթեան յայտնեց որ կիպրահայ համայնքը միշտ զօրավիգ է հայրենիքին, անոր պետականութեան հզօրացման՝ իր կարելի բոլոր միջոցներով:

Այս խօսք առաւ Տիար Գալուստ Սահակեան, որ բարձր գնահատեց կիպրահայ համայնքի ներդրումը՝ հայապահպանման եւ հայրենակերտումի գծով, անդրադարձաւ՝ Հայկական Յեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով, համայն հայութեան ցուցաբերած միասնականութեան յաշտ աշխարհին, շեշտելով յատկապէս Համահայկական Հռչակագրին առանձնակի կարեւորութիւնը՝ Հայրենասիրութեան պայքարի համահայկական վճռակամութեան գծով:

Ան նաեւ անդրադարձաւ այն կարեւոր հանգամանքին, որ աշխարհը վերջապէս գիտակից դարձաւ այն անհերքելի իրողութեան, որ հայկական ցեղասպանութեան անպատիժ մնալու, չդատապարտուելու փաստը տուն տուաւ բազմաթիւ այլ ցեղասպանութիւններու աշխարհի տարբեր ծագերուն: Նախքան հարցումներու պատասխանելը, ան կանխատեսելով



արտագաղթի մասին ըլլալիք հարցադրումը, ըսաւ յստակ ու մեկին, որ արտագաղթի պատասխանատուն մենք ենք՝ բոլորս ալ: Բայց, հայ ազգն ու հայոց հայրենիքը, շարունակեց ան, կրնան դիմագրաւել ամէն դժուարութիւն եւ յաղթական դուրս գալ... Ամէնէն խօսուն վկան՝ հայոց ցեղասպանութենէն մեր վերապրումն է, ընդգծեց ան, ինչպէս նաեւ՝ հայոց պետականութեան, հայոց յաղթական բանակի առկայութիւնը:

Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Նարեկ Արք. Ալեմեզեան նշանակալից կերպով ըսաւ, որ նման այցելութիւնները անգամ մը եւս կը վերահաստատեն որ մենք մէկ ենք մեր հայկականութեամբ՝ Հայաստան եւ Սփիւռք... Կայ միայն մէկ հայութիւն, ըսաւ ան, մէկ պատմութեամբ, մէկ ճակատագրով...: Անդրադարձաւ այն փաստին, որ կիպրահայութիւնը՝ Առաջնորդարանով, դպրոցով, եկեղեցիով, ակումբներով եւ կազմակերպութիւններով՝ փոքրիկ Հայաստան մըն է, որ հայութեամբ եւ հայրենիքով կ'ապրի Ան յատկապէս կարեւորեց ՀՀ պատուիրակութեան այցը՝ Աւագ Շաբթուան ընթացքին եւ Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցին եւ բարեգալուստի ու յաջողութեան մաղթանքներ յղեց անոր:

Հուսկ, Հայաստանի Խորհրդարանական պատուիրակութիւնը ծաղկեպսակ գետեղեց Հայկական Ցեղասպանութեան յուշակոթողին առջեւ:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

Կիպրահայ

ԱՊՐԻԼԵԱՆ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ ՀԱՅՈՑ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹ

100-ԱՄԵԱԿԻ

ՄԻԱՑԵԱԼ

Հինգշաբթի 2 Ապրիլ, 2015-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Նիկոսիոյ Cleopatra Պանդոկին մէջ, հանդիսաւոր թողարկումը կատարուեցաւ Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակը ոգեկոչող Հայաստանի եւ Կիպրոսի միացեալ դրոշմաթուղթին, ներկայութեամբ Կիպրոսի եւ Հայաստանի Հանրապետութիւններու Խորհրդարաններու Նախագահներուն եւ բազմաթիւ պաշտօնական հիւրերու: Միացեալ դրոշմաթուղթը որ միաժամանակ հրապարակուեցաւ՝ կը կրէ Մելգոնեան Կրթական Հաստատութեան պատկերը, որ 1940-ական թուականներուն առնուած նկար մըն է,





հանրաձանօթ հանգուցեալ լուսանկարիչ եւ գաղթական դարձած Հայկազ Մանկոյեանի, իսկ ծառերը տնկուած են որբերուն կողմէ ի յիշատակ իրենց ծնողաց:

Այս հանդիսաւոր առիթով, Կիպրոսի Հանրապետութեան Ներկայացուցիչներու պալատի նախագահ Պրն Եաննակիս Օմիրու յատկապէս ըսաւ իր ողջոյնի խօսքին մէջ. « Դրոշմանիշի խորհրդանշական թողարկումը ունի եւս իր ուրոյն դերակատարութիւնը յիշողութեան պահպանման գործին մէջ: Մելգոնեան պատմական հաստատութիւնը ներկայացուած է դրոշմանիշին վրայ: Հաստատութիւնը հիմնեցին հայկական Սփիւռքի երջանկայիշատակ բարերարներ՝ Կարապետ եւ Գրիգոր Մելգոնեան եղբայրները՝ ապաստան, սնունդ եւ կրթութիւն տալով երիտթուրքերու կողմէ բռնի տեղահանուած, ծնողազուրկ հայ մանուկներուն, որոնք ապաստան գտան փորձութիւններու մէջէն անցած մեր կղզիին մէջ:....Այսօրուան այս համեստ ոգեկոչման միջոցառման՝ յարգանքի տուրք կը մատուցենք հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին, Մելգոնեան բարերարներու յիշատակին, ովքեր չմոռցան իրենց արմատները: Կը յարգենք Հայաստանը եւ աշխարհով մէկ սփռուած հայկական Սփիւռքը: Անոնք վառ պահեցին յիշողութիւնը ապագայ սերունդներուն համար: Կը մաղթեմ որ այս միացեալ դրոշմանիշի ուղերձը հասնի աշխարհի բոլոր անկիւնները»:

Կիպրահայ

ԿԻՊՐՈՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՒՄԸ

ՔՐԷԱԿԱՆԱՑՆՈՂ ՕՐԷՆՔ

Հինգշաբթի 2 Ապրիլ 2015-ին, յետմիջօրէի ժամը 4-ին, Կիպրոսի Ներկայացուցչական պալատին պաշտօնական այցելութիւն տուաւ ՀՀ Ազգային Ժողովի Նախագահը՝ իր պատուիրակութեան հետ միասին:



Բարի գալուստի իր խօսքին մէջ, Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Տիար Եաննակիս Օմիրու բարձր արժեւորեց Կիպրոսի եւ Հայաստանի սերտ կապերը, որոնք այս այցով առաւել եւս պիտի ամրապնդուին, ըսաւ ան: Այդ կապերու մէկ խօսուն վկան էր, շարունակեց ան, Հայոց Ցեղասպանութեան հարցի արծարծումը ատենի Արտաքին

Գործոց Նախարար Սփիրոս Կիպրիանուի կողմէ՝ ՄԱԿ-ի ամպիոնէն՝ դեռեւս 1965-ին: Ապա՝ 1975-ին՝ Կիպրոսի Խորհրդարանի պաշտօնական ճանաչումն ու դատապարտումը հայկական ցեղասպանութեան: Իսկ այսօր՝ առաւօտուն, աւելցուց ան, Կիպրոսի



Խորհրդարանը պատմական որոշում մը առած է, միաձայնութեամբ ընդունելով Հայկական Ցեղասպանութեան Ժխտումը քրեականացնող օրինագիծ: Այս յայտարարութիւնը ծավոյղոյններով ընդունուեցաւ բոլոր ներկաներուն կողմէ:

Ապա խօսք առաւ ՀՀ Ազգային Ժողովի Նախագահ Տիար Գալուստ Մահակեան, որ շնորհակալութեան ջերմ խօսքերով անդրադարձաւ Կիպրոսի ժողովուրդին եւ կառավարութեան ցուցաբերած սրտբաց հիւրընկալութեան՝ Եղեռնէն մագապուրծ մեր ժողովուրդի իլեակներուն հանդէպ, անոնց շնորհած ապաստանին, ապա՝ քաղաքացիութեան իրաւունքներուն, առանց որեւէ ազատութեան կաշկանդումի: Հուսկ՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման Կիպրոսի Խորհրդարանի կեցուածքին, ի մասնաւորի վերջինին նոր ընդունած օրինագիծին համար՝ հայկական ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ որ Կիպրոսի Նախագահ Տիար Նիկոս Անասթասիատիս՝ ընդառաջելով Հայաստանի Հանրապետութեան հրաւերին, անձամբ ներկայ պիտի ըլլար 24 Ապրիլին՝ Երեւան, Ցեղասպանութեան ոգեկոչման պաշտօնական հանդիսութեան: Տիար Գալուստ Մահակեան անդրադարձաւ նաեւ Թուրքիոյ վարած սպառնագին, ռազմաշունչ քաղաքականութեան, անոր կատարած շարունակական ոտնձգութիւններուն ինչ կը վերաբերի Կիպրոսի հիմնախնդրի լուծման, հայկական Ցեղասպանութեան հետեւողական ժխտումին, Հայաստանի Հանրապետութեան շրջափակման, Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու շարունակական նենգափոխման, նախապայմաններու յառաջ քշումին, ինչ որ պատճառ եղեր էր որ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան յետս կոչէր զանոնք Ազգային Ժողովէն:

Հուսկ ան անգամ մը եւս արտայայտեց Հայաստանի զօրակցութիւնը Կիպրոսի՝ քաղաքական եւ հասարակական բոլոր մակարդակներու վրայ ալ եւ յոյս յայտնեց որ Հայաստան-Կիպրոս եղբայրական դարաւոր կապերը աւելի եւս սերտանան ապագային:

Ապա՝ Պետական Ներկայացուցիչ Տիար Վարգէս Մահտեսեան, իր հերթին, նշեց որ 1975-ին, Կիպրոսի Ներկայացուցիչներու Տունը հանդիսացեր էր առաջին Եւրոպական Խորհրդարանը եւ աշխարհի երկրորդ երկիրը որ ճանչցեր էր հայոց Ցեղասպանութիւնը: Ան եւս իր սրտագին շնորհակալութիւնը յայտնեց Խորհրդարանին, որ միաձայնութեամբ ընդունած էր հայկական Ցեղասպանութեան Ժխտումը քրեականացնող օրինագիծը, ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով:

Կիպրահայ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Ուրբաթ, 3 Ապրիլ 2015-ին, կ. ե. ժամը 6:00-ին, Նիկոսիոյ Famagusta Gate պատմական կառոյցի ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բացումը՝ Կիպրոսի եւ Հայաստանի Խորհրդարաններուն միացեալ ցուցահանդէսին, որ կազմակերպուած էր Հայաստանի Հանրապետութեան Ցեղասպանութեան Թանգարան Հիմնարկին հետ համագործակցաբար:



Տպաւորիչ էր՝ երեք մեծ սրահներ ընդգրկող, Ցեղասպանութեան հարիւրաւոր լուսանկարներու բծախնդիր դասաւորումը, որոնցմէ իւրաքանչիւրը ունի փաստագրական վաւերաթուղթի արժէք, առնուած ըլլալով օտար յայտնի անձնաւորութեանց կողմէ՝ Եղեռնի սեւ օրերուն: Անոնց մէկ մասն ալ կը բաղկանայ ատենի օտարագիր հանրայայտ թերթերու առաջին էջերէն, ուր հրապարակուած են հայկական Ցեղասպանութեան փշաքաղիչ դէպքեր

ու իրադարձութիւններ, նկարներ եւ մամուլի կարեւոր վկայութիւններ են: Իւրաքանչիւր ցուցադրուած լուսանկարը կը կրէ անզլերէն եւ յունարէն բացատրական գիրեր, վայրի եւ թուականի նշում եւ այլ մանրամասնութիւններ:

Իր բացման խօսքին մէջ, Կիպրոսի Հանրապետութեան Ներկայացուցիչներու պալատի նախագահ Պրն. Եաննակիս Օմիրու յատկապէս ըսաւ. « Ցուցահանդէսին մէջ ներկայացուած լուսանկարները եւ մամուլի նիւթերը կը վկայեն հայ բնակչութիւնը դաժանօրէն սպաննելու քաղաքականութեան մասին:Իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ Ներկայացուցիչներու պալատին մէջ հայկական կրօնական խումբի ներկայացուցիչ Պրն.Վարդգէս Մահտեսեանին, ցուցահանդէսը կազմակերպելու իր ուրոյն դերակատարութեան համար:....Այս ցուցահանդէսը յարգանքի փոքր տուրք մըն է՝ թուրքական բարբարոսութեան զոհ դարձածներուն եւ փոքր ներդրում մը՝ հայ ժողովուրդի յանուն պատմական յիշողութեան ամուր պահպանման ուղղուած ջանքերուն: Հայերը կը յիշեն եւ կը պահանջեն: Ամբողջ միջազգային հանրութենէն կը պահանջեն Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, արդարութիւն կը պահանջեն հայ ազգի նահատակներուն համար: Կը վստահեցնենք, որ Կիպրոսի ժողովուրդը միշտ Ձեր կողքին է այս պայքարին մէջ»:



ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Պրն Գալուստ Սահակեան իր խօսքին մէջ անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեց Պրն. Օմիրուին եւ Պրն Մահտեսեանին՝ ցուցահանդէսի յաջող կազմակերպման համար: Ան շեշտեց այն իրողութիւնը, որ հայկական Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած այս լուսանկարները ցնցող են, սակայն նաեւ լոյսի կանթեղ են անոնք յիշելու եւ յիշեցնելու համար եւ միաժամանակ պարտաւորեցնող պատգամ են նոր սերունդին համար մասնաւորաբար որ ա՛լ երբեք նման յանցագործութիւն չկատարուի աշխարհի մէջ:

Խօսք առաւ նաեւ Պետական Ներկայացուցիչ Պրն Վարդգէս Մահտեսեան, որ իր կարգին արտայայտեց ցուցահանդէսի կարեւորութիւնը եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Կիպրոսի Ներկայացուցիչներու պալատի նախագահին եւ անդամներուն, որոնք միաձայնութեամբ ընդունեցին հայկական Յեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծը:

Սոյն ցուցահանդէսը բաց մնաց հայ թէ օտար հանրութեան մինչեւ 15 Ապրիլ 2015:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

Խմբագրական

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԷՆ ԱՆԴԻՆ....

24 Ապրիլ 2015 թուական: Մեր մեծագոյն ողբերգութեան հարիւրամեայ տարելի՛ցը, ա՛յն գեհե՛նային իրադարձութեան, որ արմատախիլ ըրաւ մեզ մեր բազմահազարամեայ բնօրրանէն հայրենի, ցեղասպանեց մեր ժողովուրդի աւելի քան մէկ ու կէս միլիոնը, գլխատեց մեր մտաւորականութեան բազմահարիւր թիւով ընտրանին եւ մնացորդացը սփռեց աշխարհի չորս ծագերուն..., որպէս «փոշի ազգ»:



Հանգրուան մը՝ արժեւորելու մէկդարեայ ուղին եւ ծրագրաւորելու յետագայ ընելիքը..., մեր համազգային խոնարհումը բերելէ ետք մեր մէկ ու կէս միլիոն անշիբիմ նահատակներու անթառամ յիշատակին՝ մէ՛կ սիրտ եւ մէ՛կ հոգի, հայրենիքէն մինջեւ Արցախ եւ մինչեւ ամէնէն յետին գաղութը Սփիւռքի, ուր նոյնիսկ մէ՛կ հայ կայ տակաւին, որ կը շնչէ՛ ու կ'ապրի՛ հայութեամբ...

Հարիւր տարուան մէջ, ի՛նչ վերելքներ ու անկումներ արձանագրեց հայութիւնն ու հայոց հայրենիքը,.... մերթ Սարդարապատեան հաւաքական բռունցքով եւ ոգեղէն հրայրքի ժայթքումով ջախջախելով արիւնարբու եւ հայաջինջ թշնամին, ստեղծեց ան իր հայրենի պետականութիւնը, իր յաջորդական երեք Հանրապետութիւններով, ազատագրեց իր Արցախեան աշխարհը, մերթ ալ մասնատելով եւ պառակտելով իր հաւաքական միասնութիւնը՝ իրերամերժ կուսակցութեանց, հատուածներու եւ հոսանքներու միջեւ,



ջլատեց ան իր ողջ ներուժն ու կարողականութիւնը: Մերթ հայապահպանման եւ հայակերտման հրաշագոր ուժով ոտքի կանգնելով՝ ստեղծեց ան իր դպրոցներու, եկեղեցիներու, կրթական-մշակութային-երիտասարդական կազմակերպութեանց, մամուլի ցանցը աշխարհով մէկ, մերթ ալ ներքին սին վէճերով եւ գգուրտութիւններով ջուր լեցուց ան թշնամիին ջրաղացին...: Մերթ ազգային դիմադրական հզօր ոգիով պայքարեցաւ ան՝ ձուլման ահեղ հոսանքին դէմ, օտար ու խորթ բարքերու, համաշխարհայնացման յորձանքն ի վեր, մերթ ալ անձնատուր եղաւ ան անոր ամենակուլ հոսանքին, փակելով դպրոց ու մամուլ, օտարուելով ինքն իրեն, դաւաճանելով իր տարագիրի ինքնութեան եւ գիտակցութեան, անոր յանձնառութեան....

Տարագիր արեւմտահայութեան ժառանգորդները, ցրուած աշխարհի երեսին, չկրցան երբե՛ք ի մի բերել իրենց ցանուցիր ուժերը, չկրցան վեր ելլել իրենց հատուածական մտածողութենէն եւ համահայկական մտածողութեամբ ու տեսլականով առաջնորդուած՝ ստեղծել զիրենք լիի՛րաւ ներկայացնող Համասփիւռքեան Մէկ եւ Լիազօր Ներկայացուցչական Մարմին, որ կարենար խտացնել եւ համակարգել իրենց ուժերը՝ պահանջատիրական, իրաւաքաղաքական, հայապահպանման ոլորտներէն ներս, կարենար իրենց անունով խօսիլ՝ ներքին եւ արտաքին ճակատներու վրայ, կարենար բազում հարցերու քննարկման եւ որոշում կայացնող հարթակ դառնալ....Մարմին՝ ժողովրդավարական հիմունքներով գոյացած, որ կարենար անտէր-անտիրական Սփիւռքի ճակատագիրը տնօրինել, բոլոր տեսակի կամայականութիւններէն եւ նեղ-խմբակցային նկատառումներէն ձեռքազատ....Ի գուր չէ որ հայրենի Գ. Հանրապետութեան կարկառուն դէմքերէն մին Սփիւռքը պիտի կոչէր «Խեղճ ու Կրակ Սփիւռք» նսեմ բնութագիրով....,երբ կտոր-կտոր է ան ու բաժան-բաժան, ինչ որ շատ ձեռնտու է անոր ճակատագիրը ձեռնավարել փորձող կառոյցներուն եւ պետութիւններուն:

Ինչ կը վերաբերի Հայ Դատի հետապնդման սրբազան գործին, Յեղասպանուած եւ հայրենահանուած տարագիր հատուածը մեր ժողովուրդին իր ուժերուն եւ կարելիութեանց նկատառելի մասը յատկացուց՝ կատարուած մեծագոյն ոճիրին միջազգային ճանաչում ապահովելու գործընթացին՝ ա՛յս կամ ա՛յն երկրի նախագահին, խորհրդարանին, միջազգային կազմակերպութեան կամ այլոց կողմէ, ինչ որ գերազանցօրէն բարոյական յաղթանակ է, ցաւակցական բնոյթի այրած սրտի մխիթարանք է էապէս...: Նոյն այդ ցաւակցութիւնը կիսատ-պռատ լեզուով եւ խորամանկ աղուիսագիտութեամբ արտասանեց, շուրջ տարի մը առաջ, Թուրքիոյ նախագահը Էրտողան, դահիճը հաւասարեցնելով զոհին, քանզի՝ ըստ իրեն, երկուստեք եղած են եղեր անմեղ զոհեր: Ի՛նչ լկտի անհեթեթութիւն՝:

Անդին, մինչ Խորհրդային Հայաստանի սերունդը, ազգային խոր գիտակցութեամբ կրցաւ կերտել Ծիծեռնակաբերդի պերճաշուք եւ խորիմաստ յուշահամալիրը՝ անագատ պայմաններու տակ, վերանկախացած Հայաստանի Հանրապետութեան մէջ, ՀՀ իշխանութիւններու շուրջ քսանամեայ պարտուողական քայլերէն ետք, որոշապէս դրական բեկումնային քայլ արձանագրուեցաւ Համահայկական Հռչակագիրով, ընթացիկ տարուան Յունուարին, երբ Յեղասպանութեան Նահատակաց մեծագոյն յուշաշակոթողին՝ Ծիծեռնակաբերդի կամարներուն առջեւ, հայ ժողովուրդը՝ իր պետական-եկեղեցական



աւագանիով, սփիւռքահայ կազմակերպութեանց ներկայացուցիչներով, հանրապետութեան նախագահի բերնով՝ յանձնեց համահայկական այդ Հռչակագիրը ի լուր աշխարհին: Համահայկական Հռչակագիր՝ որ որպէս համահայկական իղձերու եւ նպատակներու հիմնական փաստաթուղթ, կրնայ ըլլալ նո՛ր մեկնակէտ հայ Դատի պահանջատիրութեան գծով, եւ ուր մասնաւորաբար կ'ընդգծուի որ համահայութիւնը իր միասնական կամքով պիտի մշակէ իրաւական թղթածրար՝ որպէս անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքներու եւ օրինական շահերու վերականգնման գործընթացի մեկնարկ: Այստեղ եւս, սակայն, համահայութիւնը կրնա՛յ լիարժէք ներկայացուած ըլլալ, եթէ չկայ տարագիր Սփիւռքը լիի՛րաւ ներկայացնող Լիագոր Մարմինը, այլ միայն անոր հոգեւոր Պետերը եւ կուսակցութեանց ու միութեանց ներկայացուցիչները...:

Հռչակագիրը որոշապէս իր բուն իմաստն ու արժէքը կ'ունենայ եւ կ'արդիւնաւորուի, եթէ մենք ունենանք հզօր Հայաստան, հզօր Արցախ եւ հզօր Սփիւռք, որոնք երեք բաղադրիչներն են համայն հայութեան:

Հզօր Հայաստան պիտի նշանակէր գերագանցօրէն արդար Հայաստան, ուր չկայ հայրենի ժողովուրդը կեղեքող եւ իշխանութեանց հետ սերտաճած օլիգարխիկ մենաշնորհներու փաղանգը, որ ինքզինք օրէնքէ վեր է հռչակած, մեր երկիրը դարձնելով իր սեփական ազարակը, ուրկէ բարոյալքուած կ'արտագաղթէ ժողովուրդին մէկ ստուար մասը, հայաթափելով մեր երկիրը ներքին արհինահոսութեամբ մը...: Առանց արդարութեան հիմքերու հիմքին, չկայ հզօր Հայաստան: Արցախը տակաւին կը սպասէ իր անկախութեան ամրապնդման, անոր միջազգային ճանաչման, որուն սակարկութիւնը դարձեր է աշխարհակալ ուժերու դիւանագիտական սեղաններու ճատրակի խաղաքար...: Իսկ Սփիւռքի կենսունակութիւնն ու հզօրութիւնը անհրաժեշտ են ո՛չ միայն մեր Պահանջատիրական պայքարի արդիւնաւորման, այլեւ՝ նոյնի՛նքն Հայաստանի հզօրութեան համար: Իսկ հզօր Սփիւռք պիտի նշանակէր կուռ վերակազմակերպուած, խտացած սփիւռք: Այլ խօսքով, տարագիր արեւմտահայութեան վերակազմակերպումը՝ մէկ, լիագոր, ներկայացուցչական կառոյցի մը ներքոյ, պիտի զօրացներ նաեւ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի դիրքերը, դառնալով քաղաքական եւ ռազմավարական հզօր լծակ անոնց համար ընդդէմ հասարակաց թշնամի ճակատին:

Եռեւեփող աշխարհին մէջ, ուր աշխարհակալ ուժերը նոր քարտէսներ կը ձեւաւորեն, կոխկոտելով ժողովուրդներու հայրենիքներն ու իրաւունքները...ուր իրաւունքը դեռեւս կը շարունակէ զօրաւորին ըլլալ...ուր վայրի անտառի օրէնքն է տիրական, մինչ Թուրքիան ալ, առաւել քան երբեւէ, կը շարունակէ իր փանթուրանիզմը, որպէս իր ռազմաքաղաքական անխախտ մտածողութիւն, ներկայիս՝ նոր-օսմանիզմի դիմակին տակ, հայը կոչուած է ի մի բերելու իր ֆիզիքական, հոգեւոր, մտաւոր, բարոյական եւ իրաւաքաղաքական բոլոր հնարաւորութիւններն ու կարելիութիւնները, իր ամբողջական ներուժը՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք, դերերու ճիշդ բաշխումով, գերագոյն յանձնառութեամբ:

Հայրենատիրութեան իրաւաքաղաքական երկարաշունչ պայքարը իր մեկնակէտը առնելով Համահայկական Հռչակագիրէն, կը թելադրէ քաղաքական նոր մտածողութիւն՝ վերկուսակցական եւ վերհատուածական նոր մտածողութիւն, համահայկական նոր ոգի,



կուռ կազմակերպուածութեամբ իրաւաքաղաքական աշխատանք, որպէսզի ան չդառնայ լոկ թուղթին վրայ արձանագրուած մեռեալ տառ, այլ կարենայ մեզ առաջնորդել դէպի մեր Մեծ Երազը՝ ամբողջական հայութեան եւ ամբողջական Հայաստանի համահայկական տեսլականին կենսագործումը:

Հարիւրամեակը նո՛ր մեկնակէտի մարտահրաւէ՛ր է....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային


Իրօրինակ Ուխտագնացութիւն Մը Դէպի Տէր Զօր

Երան Գույումճեան

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ Տարելից....

Հանգրուան մը՝ ինքնամփոփ մտածումի ու արժեւորման...խոկումի ու զգաստացման...

Մեկնակէտ մը՝ նոր ամեակներու, նոր հանգրուաններու....



Մտածումս զիս կը տանի ե՛տ ժամանակին մէջ, շուրջ երկու տասնամեակ առաջ, երբ տակաւին նոր կառուցուած եւ օծուած էր Տէր-Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցին, եւ ես ուխտի կ'երթայի այնտեղ՝ խումբ մը կիպրահայ ուխտաւորներու հետ միասին....:

Ալեկոծ էր սիրտս, իստոն զգացումներով լեցուն: ՏԷՐ-ԶՕՐ: Բառ մը, որ ամբողջ պատմութիւն մը, աշխարհ մը երեւակայութիւն, յուզում եւ զայրոյթ, ընդվզում եւ ըմբոստութիւն կ'արթնցնէ, կ'եռեւեփէ հայ մարդու էութեան խորքերուն մէջ....:

Իմ եւ իմ սերնդակիցներուս համար, մասնաւորապէս, ՏԷՐ-ԶՕՐԸ անքակտելի մասը դարձաւ մեր մանկութեան եւ պատանեկութեան՝ ընտանեկան յարկին տակ, դպրոցական գրասեղաններուն առջեւ, դասագիրքերուն մէջ, մեր մեծերուն պատմած սարսռալից պատմութիւններուն մէջ....

Տէր Զօրը հայուն համար դարձաւ արիւնի ու արցունքի, վիշտի ու ողբի, ցաւի ու ցասման վայր, հարիւր հազարաւորներու անշիրիմ գերեզման...

Երբ հանրակառքը կը սուրար «Երազային Հալէպ»էն դէպի Տէր-Զօր, մտքիս տեսադաշտին մէջ՝ զարհուրելի տեսարաններ կը հրմշտկէին իրար....խողխողուող մանուկներու,



բռնաբարուող կանանց, սովալլուկ երախաներու, ցնցոտի հագած ծերունիներու՝ թշուառացած, կմախքացած, ուժասպառ...կարծէք անոնց լուսանկարները՝ դրոշմուած մեր դպրոցական դասագիրքերու մէջ եւ այլտեղ եւ ամբօրէն գամուած յիշողութեանս պաստառին վրայ, յանկարծօրէն կը յառնէին, նոր կեանք կ'առնէին, կը դառնային բաբախող իրականութիւն, կենդանի շունչ ու ոգի, սրտակէզ, սրտամորմոք...: Կարդացեր էի որ Սուրիական այս անապատներուն մէջ միայն, շուրջ մէկ միլիոն հայ զոհ գացեր էր սուկալի ջարդերու, հիւանդութեանց, անօթութեան..., թէ այս անապատներու աւազներուն հետ միախառնուած կը մնային մեր անթաղ մեռելներուն ոսկրոտիի բեկորները...: Տէր Զօրի մէջ, ի մասնաւորի, Զէքի Պէյ կոչուած արիւնարբուն կազմակերպած էր ամէնէն զարհուրելի հայասպանութիւնը, որուն միայն զոհ գացեր էին շուրջ 200,000 հայ...: Հիմա քաղաք մըն էր ան, Եփրատի գետի ափին, Սուրիոյ հիսիս-արեւելեան կողմը, նոյնիսկ սիրուն քաղաք մը, կանաչապատ, ծառաստաններով շրջապատուած...Բայց մեզի համար, ինծի համար, Եղեռնայուշ ամբողջ անցեալի մը հետ կապուած էր ան սերտօրէն, անքակտելիօրէն...:

Անդին Եփրատն էր...: Այլոց համար, բնական գեղատեսիլ գետ մը, մեզի համար սարսռազդու անուն մը, որուն պատմականութեան շունչին կը միախառնուի սրտաճմլիկ տեսարաններու մորմոքը...: Գետ մը՝ ահա, որ կը հասնի մինչեւ Տարօն, Արածանի՝ Մինչեւ Բարձր Հայք...: Գետ՝ որուն ամեհի ալեաց մէջ, ի՛նչ հայուհիներ ինքնակամ նետուեցան ու խեղդուեցան, չըլլալու համար անձնատուր՝ թուրք ասքեարներու սեռային մոլեգին ախորժակներուն...տէրը մնալու իրենց պատիւին ու արժանապատուութեան: Գետ՝ որ իր փրփրադէզ թաւալքին մէջ լափիլզեց դիակները բիր-բիրոց...:

Անցեալը անցած չէ երբե՛ք: Եւ ի յիշատակ այդ անցեալին, նահատակաց եւ անոնց զոհողութեան ոգիին որպէս պսակ անթառամ, կառուցուած է այս սրբատեղին, ուր ոտք կը դնենք երկիւղածութեամբ, ամէն մէկս իր միտքերով, խորապրումներով տարուած, վերացած...:

Հիասքանչ յուշակոթողը նաեւ մարմնաւորումն է, անտարակոյս, հայուն վերապրելու ճիգին, մեռնիլ մերժող ոգիին, հերոսական վերածնունդի խորհուրդին...:

Տպաւորիչ վեհութիւն մը ունի անոր մուտքը՝ խաչաքանդակներով եւ խորհրդանշական զարդաքանդակներով նախշազարդուած: Ամբողջ յուշահամալիրին հայատրոփ սիրտը, սակայն, եկեղեցին է՝ բոլորակի կառուցուածքով եւ վերասլաց խոյանքով: ՄՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ...:

Այստեղ է, գերազանցօրէն, որ հայ մարդը կ'ըլլայ ինքն իրեն հետ, իր հայու հոգիին հետ, իր նահատակներուն հետ, իր ազգին հետ...հայոց պատմութեան հետ...:

Այստեղ է որ ան կ'ապրի ինքնամփոփումի, հոգեբուխ աղօթքի, ոգեկոչումի, այլ մանաւանդ՝ հայօրէն վերապրելու, վերածնելու, վերազարթնելու երդո՛ւմի խորախորհուրդ պահեր...:

Մոմ կը վառեմ, ծունկի կու գամ, յուզումով կ'ունկնդրեմ մեզ ուղեկցող՝ սքանչելի ասմունքող, Շուշանիկ Մելքոնեանի ասմունքը՝ նուիրուած հայ նահատակներուն, ապրումով եւ ոգեկանութեամբ արտասանուած, որ ամբողջ մթնոլորտը կ'ընծայէ Պատարագ մը,



Հոգեհանգիստ մը առ Յիշատակին անոնց, որոնք ինկան, Բայց կ'ապրին դեռ եւ պիտի ապրին յար, ապրեցնելով մեզ...

Պիտի ուզէի ժամեր անցընել այս սրբազան յարկին տակ, լուռ խոկալ, աղօթք մրմնջել, մտաբերելով Վահագն Դաթեանի ոգեշունչ տողերը. «Ես եկել էի, որ այստեղ լռեմ, Ես եկել էի, որ չոքեմ ծունկի, Քարանամ այստեղ առանց արցունքի...»: Լռութիւնը այստեղ առաւել խօսուն է, քան ամենէն պեճախօս բառն ու տողը... Լռութեան Խորհուրդը..., որ ամենայն իսկութեամբ կրնայ քեզ վերադարձնել քու ամենէն խոր էութեանդ, հարազատ հոգիիդ, ուր լուռ կ'ապրին Բարդ-Բարդ կուտակուած՝ յուշերդ ու յիշատակներդ, յուզա-իմացական խորախորհուրդ ապրումներդ, ցաւերդ ու ցասումդ, ըմբոստութեան աննկուն ոգիդ, յոյսերդ ու երազներդ... Լռութիւն՝ թաքուն ձայներով եւ ներքին այրող կրակով տոգորուն...

Եւ մտածել որ այսօր, այդ ուխտագնացութենէն շուրջ քսան տարի ետք, այս սրբազան յուշակոթողը աւերակի է վերածուած՝ նոյն ոսոխին քստմնելի ձեռքով, Յեղասպանութեան 100-րդ տարելիցի սեմին...: Միտքս կ'երթայ այն բոլոր յիշատակարաններուն՝ հայրենիքի մէջ եւ աշխարհի չորս ծագերուն, որոնք բարձրացան որպէս յիշատակ, Բայց նաեւ որպէս վերապրումի անխորտակելի կամքի... որպէս ազգային վերածնունդի եւ յարատեւումի կոթողներ...

Կոթողները բոլոր պիտի կարենա՞ն սակայն մեզ վերադարձնել Անփոխարինելին՝ Հայրենեաց կորուսեալ ՀՈՂԸ, որ պարունակն էր մեր քաղցրահունչ լեզուին՝ Արեւմտահայերէնին, դարաւոր եւ պանծալի մշակոյթին, արուեստներուն եւ արհեստներուն, ազգային մեր կառոյցներուն բազմահազար, ընտանեկան օճախներուն բիրաւոր, մեր նախնեաց աճիւնին նուիրական... ՀՈՂԸ, առանց որուն ազգը կը դառնայ թափառական,



տարտղնուած, «փռշի ազգ»..., տակաւ կորսնցնելով իր ինքնութիւնը, հարազատ դիմագիծը, նկարագիրը, կ'այլասերուի ու կ'այլանդակուի ալ...

Սա չէ՞ Յեղասպանութեան եւ Հայրենահանումի գուցէ մեծագոյն կորուստը...

Իսկ Հարիւրամեակը՝պիտի ըլլա՞յ ան դարձեալ լոկ սգալու, լոկ ողբալու, լոկ ոգեկոչելու, խունկ ծխելու, հոգեհանգիստ կատարելու եւ ծաղկեպսակներ գետեղելու

առի՞թ... Դարձեալ նո՞յն ոլորապտոյտը ի շրջանս իւր, կամ գուցէ՞ նոր գիտածողովներ, նո՞ր յիշատակարան-կոթողներ, նո՞ր խաչքարեր...: Այդքա՞ն:

Բայց արդե՞՞ք Հարիւրամեակը մեր երազներուն եւ տեսլականին վերջակէտն է, թե՞՞ նոր սկիզբ մը միայն, նոր մեկնակէտ մը՝ ազգովին իմաստանալու, հզօրանալու, համախմբուելու, ազատագրուելու մեր պատրանքներէն, ապաւինողականութենէն,



հատուածամոլութենէն...Նոր ելակէտ՝ կերտելու հօր հայրենիք ու պետականութիւն, խտացեալ եւ վերակազմակերպուած Սփիւռք..., որոնք իսկապէս ալ ըլլան արժանի մեր նահատակներու Կտակին...:

Հայասպանութեան դէմ՝ ազգային նոր գիտակցութեան վերագարթնում, մասնատումին դէմ՝ նոր խտացում, նոր ամբողջացում, հայրենահանման դէմ՝ ազատագրուած նոր Հայաստան, որ ամենէն ամուր երաշխիքն է Ազգահաւաքի եւ Հողահաւաքի: Մէկ ամբողջական հայութեան եւ Մէկ ամբողջական Հայաստանի, որուն վառ տեսիլքով փակեցին իրենց աչքերը՝ մեր անշիրիմ նահատակները...:

Ի վերջոյ, Տէր Զօրը՝ մեր անհամար մեռելներուն սուրբ նշխարները ամփոփող ուխտավայր որպէս, խոստումի եւ երդումի վայր է, գերազանցօրէն, հայօրէն ապրելու, կառուցելու, ստեղծագործելու, երազելու, պայքարելու..., ուր՝ կրկնելով անմահ Վարուժանի տողերը, հայ ուխտաւորը լուռ կ'երդնու ի սրտէ. «Զի մենք, յանուն Մերին, Մերմին, քու հին Յեղիղ Մարմարէն կոյս, Մե՛նք, Զուակներդ օգոստափառ, պիտի կերտենք Նո՛ր Արշալոյս»:

Հարիւրամեակը նոր մեկնակէտ է գերազանցօրէն.....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՆՃԵԱՆ

Տեսակէտ

« ՄԻԻՍ ԹՈՒԻՐՔԸ »

Փրոֆ. ԹԱՆԷՐ ԱՔՉԱՍ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻ ՍԵՄԻՆ

« Վաղ թէ ուշ , Թուրքիա պիտի ստիպուի առերսուիլ իր կասկածելի պատմութեան հետ ...



Հարցը Թուրքիոյ հոգեբանութեան մէջ կը կայանայ ,այլ ոչ ճանաչում-հատուցումի էութեան մէջ ... Ճանաչում-հատուցումով Թուրքիա պիտի չձեռքազատուի իր մեղքէն, այլ աւելին՝ պիտի պարտաւորուի իր սեւ ու մութ պատմութեան էջերը բանալ եւ խոստովանիլ, որ նախ եւ առաջ խաբած է իր իսկ ժողովուրդը ... :

Թերեւս իմ սերնդակիցներէս ոմանք , օր մը կը յաջողին գտնել հայերու ցեղասպանութիւնը իրականացուցած՝

իրենց պապերը դատապարտող փաստաթուղթեր, հաստատելու համար, որ փաստաթուղթերու բնաջնջումը ապահովութիւն նկատողներու կարգին, կան նաե՛ւ այլ մարդիկ , որոնք յանուն արդարութեան կը ջանան ճշմարտութիւնը երեւան հանել ... »



Փրոֆ. Թանէր Աքչամ

Այսօր Թուրքիան կը գտնուի ամբողջատիրական-բռնատիրական պետութենէ մը, ժողովրդավարական պետութիւն դառնալու անցումային հանգրուանին մէջ , ուր երկրին բաղկացուցիչ բոլոր ոլորտներուն մէջ բուռն պայքար տեղի կ'ունենայ «բարեփոխականներու» եւ « պահպանողական- ներու » միջեւ եւ այդ առանցքին մէջ, անշրջանցելի իրականութեան մը առկայութեամբ , կարեւոր-րութեամբ կը շեշտուի այն հանգամանքը, որ երկրին բռնատիրական ասանդոյթը ձեւաւորուած է հակահայ թշնամանքի սնուցմամբ եւ 1915 ի հայերու ցեղասպանութեան ժխտումով , հետեւաբար ե՛ւ նոյն ինքն սեփական պատմութեան ժխտումով ... :

Արդարեւ , ուրանալով իր անցեալը Թուրքիան աշխատած է դառնալ լոկ « սկիզբ » , դառնալ «ծնունդ » այլ ոչ « վերածնունդ » եւ ասկէ մեկնելով իր բոլոր կապերը խզած է օսմանցիներուն պատկանող իր անցեալին հետ , ուր « իսլամը » հաւաքական յիշողութենէն ջնջած էր թրքական ինքնութեան առնչուող ամէն բան :

Անցումային այս հանգրուանը կոչուած է անթիւ ու անհամար դժուարութիւններ եւ խոչընդոտներ դիմագրաւել , որովհետեւ խնդրոյ առարկայ փոփոխութիւնները ոչ միայն պետութեան կը պատկանին , այլ նաեւ երկրին բնակչութեան խայտաբղետ խճանկարին մաս կազմող հասարակութեան ժողովրդավարացման , եւ ահա այստեղ է որ պետութիւն- հասարակութիւն ժողովրդավարացման գործընթացը փակուղիէն դուրս գալու եւ իրականացման լուրջ փուլ մտնելու համար , ի շարս բազմաթիւ ու բազմազան մարտահրաւերներու , բայց եւ առաջնագոյնի եւ անշրջանցելի կշիռով , կը պայմանաւորուի հակահայ քաղաքականութեան վերացմամբ :

Այս իրականութեան գիտակից , երկրին քաղաքացիական հասարակութեան մաս կազմող « անհատ մտաւորականներ » , որոնք արեւմուտքի մէջ բարձրագոյն կրթութիւն ստանալու միջոցին առիթը ունեցած են ծանօթանալու իրենց երկրի պատմութեան արատաւոր եւ սեւ էջերուն , մանա-ւանդ վերջին 10-15 տարիներուն , ի խնդիր երկիրը ժողովրդավարութեան ուղիով առաջնորդելու , բուռն պայքար կը մղեն , բացայայտելու իրենց պատմութեան մութ ծալքերը , որոնց խորքը գտնուող 1915 ի հայոց ցեղասպանութիւնը , կը ներկայանայ իբրեւ մեկնակէտ , քննութեան առարկայ դարձնելու այդ թուականէն մինչեւ օրս տեղի ունեցած եւ ունեցող այլաբնոյթ անարդարութիւններու եւ մարդկային տարրական օրէնքներու ոտնահարումը ...

Այս պարունակի մէջ , պատմական տուեալներու լոյսին տակ , անժխտելի իրականութիւններ են նաեւ 1915 ի հայ ժողովուրդի ցեղասպանութենէն եւ ասորիներու կոտորածներէն ետք , հանրապետական Թուրքիոյ մէջ տեղի ունեցած ահաւոր իրադարձութիւններ , որպիսին են 1921ին Քոչգիրիի եւ 1921-1922 ին Պոնտոսի կոտորածները , 1934 ին Թրակիոյ հրեական փոկրումը , 1938 ին Տերսիմի կոտորածը , 1942 ին ոճիրի համագոր « ունեւորութեան տուրք » ի հետքերով ի գործ դրուած բռնարարքները , 1955 ի Սեպտ. 6-7 , մասնաւորաբար յոյներուն եւ ընդհանրապէս քրիստոնէաներուն դէմ շղթայազերծուած սոսկալի դէպքերը , 1960 ի արիւնալի յեղաշրջումը , 1980ի զինուորական



յեղաշրջումի ընթացքին արձանագրուած մահապատիժները , յալածանքներն ու բռնութիւնները , 1990 ականներուն ծաւալ ստացած քրտական հարցի բաւիղներուն մէջ կատարուած « պատերազմի ոճիրներ » ը եւ տարաբնոյթ այլ արարքներ , սակայն եւ որոնք բոլորն ալ խստօրէն դատապարտելի ըլլալով հանդերձ , չեն համեմատուիր հայ ժողովուրդի ցեղասպանութեան ահաւորութեան հետ , որուն ուրացման արդիւնքով ձեւաւորուած երկրին սուտի եւ կեղծիքի վրայ հիմնուած կառոյցին բացայայտումը , ո՛չ միայն կը խախտէ այդ կառոյցին հիմերը , այլ նաեւ ցնցումի կ'ենթարկէ թուրքերուն իրենց ազգային ինքնութեան մասին ցարդ ունեցած անխախտ համոզումները ...:

Ստորեւ , հայ եւ թուրք մամուլի էջերէն քաղուած նիւթերու ընդմէջէն , խիստ սահմանափակ տարողութեամբ փորձ մը կը կատարուի , ներկայացնելու վերջին 20 տարիներու ընթացքին թուրք ականաւոր պատմաբան Փրոֆ. Թանէր Աքչամի 1915 ի հայոց ցեղասպանութեան եւ այս ուղղութեամբ Թուրքիոյ քաղաքական դիրքորոշումին մասին յայտնած զանազան տեսակէտները , ուր « հայասէր թուրք » ի վարկածը երբէք խնդրոյ առարկայ չի կրնար ըլլալ , այլ պայծառ ուրուագիծով մը , կը դրսեւորուի գիտականութեան անառարկելի հիմքերով արդարութեան թէզը պաշտպանող , իրապաշտ պատմագետի աշխարհահայացքը ...

* ԱՀԱ ԹԷ ԻՆՉՈՒ ԵՒ ԻՆՉՊԷՍ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԶԻԱՆ ԻՐ ԿԱՊԵՐԸ ԽՁԵՑ ԱՆՑԵԱԼԻՆ ՀԵՏ ...

1925 ին , հազ ու կապի արեւմտականացման ոճով « ֆէս »ը փոխարինուեցաւ գլխարկով :

1928 ին , լատինական տարերու որդեգրումով , նոր սերունդին կապը խզուեցաւ իր անցեալին հետ եւ կեանքի կոչուեցաւ հաւաքական յիշողութիւնը մթագնող մեքանիզմ մը , որ զուգահեռաբար կը ստուերէր թէ՛ հայուն առնչուող նիւթերը , թէ՛ պատմութեան ընթացքին թուրքերուն կրած պարտութիւնները ... պատմական գիտակցութեան նախամտածուած բացակայութեան պայմաններով , շուտով երկիրը ունեցաւ « անվերջ սկիզբներ » ու կենսակերպ , որուն առասպելական պատկերը թուրք ընկերութիւնը մխրձեց ցնորական աշխարհի մը բաւիղներուն մէջ ...

Հետեւաբար երբէք պատահական չէր կրնար ըլլալ « ապսպրովի պաշտօնական պատմութեան մը ծնունդը » , որ կոչուած էր պատնէշելու 1928 էն առաջ երկրին մէջ տեղի ունեցած դատապարտելի իրադարձութիւնները , եւ 1915 ի հայոց ցեղասպանութեան վերածումը երկրին մեծագոյն « թապու »ին , այլապէս հայերու բռնազաֆթուած կալուածներու եւ մեծ հարստութիւններու իւրացումով ձեւացած , պետական բարձր պաշտօններ զբաղեցնող նոր հարուստներու դասակարգի մը ունեցուածքը կասկածի տակ առնուելով , պիտի բացայայտուէր երկրին « առասպելական կենսակերպը » մարմնաւորող , նոր Թուրքիայի մը ղեկավարութեան ոճրածին էութիւնը ...:

Արդ , ի՞նչ պահանջել ենթամշակութային զանազան միաւորներէ բաղկացած հանրութենէ մը , որ իրեն պարտադրուած 100 տարիներու ազգայնական , միակողմանի կրթութեան հետեւանքով իր աշխարհահայացքը ձեւաւորած է « չիմացութեան » , « անտեղեկութեան » եւ « ապատեղեկատուութեան » վրայ ... հանրութիւն մը , որմէ կը պահանջուի ընդունիլ այն՝ որուն մասին ոչինչ գիտէ , պարզապէս որովհետեւ իր ամբողջութեամբ կը տառապի



յիշողութեան հաւաքական կորուստէ , հետեւաբար ինչպէս հայերը , ինք ալ կեղծ պատմութեան մը խաբուած գոհն է ...

Պէտքէ ըսել նաեւ , որ այսօր հակառակ անոր , որ ցեղասպանութեան թեման երկրին հանրութեան ուշադրութեան յանձնուած ընթացիկ հարց է , սակայն իբրեւ հասարակական խնդիր այնքան ալ տեղ չի գրաւեր , որքան քրտական հրատապ հարցը , գուցէ այն նկատառութեամբ , որ Թուրքիոյ մէջ , ներկայ տուեալներով ցեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունելու անմիջական անհրաժեշտութիւն չկայ ... :

*** ԺԽՏՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ ...**

Թուրքիոյ հանրապետութիւնը ստեղծած երկրին հիմնական իշխանութիւնները հանդիսացող զինուորականութիւնն ու դիւանակալութիւնը յարատեւօրէն կը փակեն հայոց ցեղասպանութեան ճանաչման տանող ուղիները , կը խափանեն համաբնոյթ փորձերը , մինչ իշխող կուսակցութիւնները պարզապէս անոնց պատուերը կատարելով կը շարունակեն ժխտել , հերքել եւ խեղաթիւրել պատմական անարդարութեան փաստացի բոլոր տուեալները ...

« Հայկական թշնամանք » ին վրայ ձեւաւորուած պետութեան ժխտողականութեան քաղաքակա-նութիւնը դրսեւորող գործելաձը կը գերիշխէ ո՛չ միայն անոր ցեղապաշտական վարքագիծին վրայ , այլ նաեւ ձախակողմեան եւ ազատական շրջանակներու քաղաքական հայեացքներուն վրայ ...:

ԱՄՆ-ի այսպէս կոչուած « սպիտակ թուրքեր » ն ալ – որոնք թունդ ազգայնամուլներ են , վտանգաւոր են իրենց հակահայ քարոզչութեամբ , մինչ Ֆէթուլլահ Կիւլէնի շարժումին համակիրները աւելի կրօնասէր են եւ աւելի հանդուրժողական , եւ տարակարծիք են «սպիտակ թուրքեր » ուն հետ , վերջինները կը ձգտին իրականութեան բացայայտումին եւ յայտնաբերած են կապը

« Էրկենեքոնի » , հայոց ցեղասպանութեան եւ Հրանդ Տինքի ու այլ քաղաքական սպանութիւններու միջեւ: Էրկենեքոնի գաղափարա-քաղաքական առանցքը հայութեան հանդէպ թշնամանքի վրայ ձեւաւորուած է ... ինչպէս որ նացիականներու հրէական թշնամանքի առանցքին վրայ քաղաքա-կան կառոյց ստեղծուեցաւ , ուր գերմանական հասարակութեան մէջ աջակցութիւն գտան նացիականները , այնպէս ալ Էրկենեքոնը հակահայկական առանցք ունեցող քաղաքական կազմակերպութիւն ըլլալով , կը ձգտի երկրին հասարակութեան աջակցութիւնը ստանալ , անոնց հայերու հանդէպ հրահրած թշնամանքէն օգտուելով ...

Պէտք է ըսել նաեւ , որ հասարակական ոլորտներու մէջ , Թուրքիոյ տարածքին հաւաքական յիշողութիւնը միակողմանի է , մարդիկ կ'ուզեն յիշել միայն իրենց դէմ եղած «երեւակայական , յերիւրածոյ չարիքը » , բնականաբար այս մօտեցումը հեռու ըլլալով իրապաշտութենէ , հոգեբանական տագնապի մը պատկերը կ'արտացոլացնէ ... Երկա՛ր տարիներու անտեղեակութեան , ապա անսպասելիօրէն ճշմարտութիւնը երեւան հանող երեւոյթներու արդիւնքով , հասարակութիւնը դարձած է շատ դիւրագգաց , կողմնակալ եւ



պահպանողական , պարզապէս բնագոյային մղումով չկարենալով հանդուրժել իրեն կ'պցուած դահիճի եւ ոճրագործի պիտակը ... Այս մասին Փրոֆ. Թանէր Աքչամի եզրայանգումները աւելի քան իրապաշտական են երբ անձնական օրինակով դիտել կուտայ երկրին քաղաքացիական-հասարակական հոգեբանութեան իրապատկերը, ըսելով՝

1990 ականներուն , երբ Թուրքիոյ մէջ , անհատ մտաւորականներու չափանիշներով սկսած էինք պայքարիլ մարդու իրաւունքներու եւ ժողովրդավարութեան համար , հայ սփիւռքի բարձրացուցած ցեղասպանութեան պահանջքը ուղղակիօրէն վնաս կը հասցնէր մեզի, հետեւաբար սփիւռքին հանդէպ ատելութիւնը աւելի կը խորանար , սակայն ատեն մը ետք երբ զարթօնք ապրող քաղաքացիական հասարակութիւնը սկսաւ ժողովրդավարութեան իր պայքարը մղել , հարկ եղաւ սեփական պատմութեան էջերը թերթատել , եւ այսպիսով սկսաւ այդ պատմութեան մթին էջերու բացայայտումը, ինչպէս 1955 ի Սեպտ. 6-7 Իսթանպուլի մէջ յատկապէս յոյներուն եւ ընդհանրա-պէս քրիստոնէաներուն դէն շղթայազերծուած խոշտանգումներու եւ հալածանքի դէպքերը , ապա 1942ին երկրին քրիստոնէութեան պարտադրուած « ունեւորութեան տուրք » ի դրդապատճառները, որոնք կը դրսեւորէին երկրին փոքրամասնութիւններուն դէմ կիրարկուած ցեղային խտրականութեան եւ այլամերժութեան քաղաքականութիւնը, աւելի ուշ , երկրին քաղաքական մեծագոյն թապուն համարուող 1915 ի հայերու ցեղասպանութեան հարցը , իր տակաւ ընդլայնող քննարկումներով դարձաւ պատմական գիտակցութիւնը խթանող ազդակ , այս ուղղութեամբ Հրանդ Տինքի սպաննութիւնը մեծ դեր խաղցաւ հասարակութեան գիտակցութեան առկայծումին մէջ :Հրանդին սպաննութիւնը եղաւ արդարութեան խորհրդանիշ մը եւ դարձակէտ մը մեր ժամանակակից պատմութեան մէջ ... անոր սպաննութիւնը յեղափոխութիւն յառաջացուց հասարակութեան մտածելակերպին եւ հոգեբանութեան մէջ, բացայայտեց երկրին պաշտօնական քաղաքականութեան իրական դէմքը , մեղմեց հոգեկան ճնշուածութիւնը եւ մեզ մղեց , որ պաշտպանողական դիրքերէ անցնէինք հակայարձակողականի , այսպիսով ձեւաւորուեցաւ յառաջադէմ մտաւորականներու դասակարգ մը, որուն հետ հաշուի նստիլը դարձաւ պահանջք եւ անհրաժեշտութիւն, եւ ամենակարեւորը՝ հայոց ցեղասպանութիւնը դարձաւ քաղաքական պայքարի ենթահող, որ յաճախ շահարկումի ալ կ'ենթարկուի երկրին մէջ տեղի ունեցող քաղաքական պայքարներու բաւիղներուն մէջ ...:

Այսօր պէտք է խոստովանիլ , որ հայ սփիւռքի բարձրացուցած ձայնն էր, որ եկաւ մեզի յիշեցնելու այս բոլորը , հայ սփիւռքի բարձրացուցած ձայնն էր , որ եկաւ մեզի յիշեցնելու մեր պատմութեան ամօթալի էջերը բանալու անհրաժեշտութեան մասին , ուրեմն առանց սփիւռքին մենք պիտի չյաջողէինք ցեղասպանութեան հարցը արծարծել եւ զայն երկրին քաղաքացիական հասարակութեան ուշադրութեան յանձնել ...:

* ԱՐԽԻԻՆԵՐՈՒ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ ...

Արիւններու մաքրագործումն ու բնաջնջումը Թուրքիոյ մէջ « վարչական կարեւոր մշակոյթ մըն է » , որուն անգիր օրէնքներով փճացուած են հայոց ցեղասպանութեան առնչակից բազմաթիւ փաստաթուղթեր :



1919 ի մայիսին , Բոթանպուլի պաշարման օրերուն , պատերազմական ատեանին մօտ իթթիհատականներուն դէմ բացուած դատի ամբաստանագիրը, ուր կը նշուի իթթիհատականներու վարչական կեդրոնին եւ « Թեշքիլաթը Մահուսէ » կազմակերպութեան վերաբերող փաստաթուղթերու թղթածրարներուն « անհետացումը » կամ « գողցում » ըլլալը , բազմաթիւ վաւերաթուղթերու սպանող վկայակոչող լոկ օրինակ մըն է ...

Թղթատարական սպասարկութիւններու տնօրէններուն ալ հրահանգուած էր բնաջնջել հայերու ջարդերուն բովանդակութեամբ հեռագիրները, որոնց տակ կը գրուէր, « կարդա', ապա անմիջապէս փճացու'ր ... »

Թուրքիոյ յաջորդական կառավարութիւնները, հաւանաբար այս պատճառով հանգիստ կը զգան եւ պարբերաբար մէջտեղ կը նետեն հայ եւ թուրք պատմաբաններու միասնաբար քննարկումներ կատարելու առաջարկը ...

Թերեւս իմ սերնդակիցներէս ոմանք , օր մը կը յաջողին գտնել հայերու ցեղասպանութիւնը իրականացուցած իրենց պապերը դատապարտող փաստաթուղթեր, հաստատելու համար, որ փաստաթուղթերու բնաջնջումը ապահովութիւն նկատողներու կարգին, կան նաե'ւ այլ մարդիկ, որոնք յանուն արդարութեան կը ջանան ճշմարտութիւնը երեւան հանել ...

Պրպտումներս ցոյց տուին, որ օսմանեան իշխանութիւններու ցեղասպանութեան վերաբերող մտադրութիւնները կարելի է փաստել նոյնիսկ օսմանեան փաստաթուղթերու վրայ հիմնուելով : Ըստ անոնց, որոնք կ'ուրանան հայոց ցեղասպանութիւնը, միայն օսմանեան արխիւներուն կարելի է վստահիլ, պաշտօնական Թուրքիան եւ անոր սայլին լծուած ուրացողները կը փաստարկեն, որ գերմանական, բրիտանական, ամերիկեան եւ այլ օտար արխիւային նիւթերը քաղաքական միտումներով ստեղծուած են, հետեւաբար իրենց էութեամբ կողմնակալ են եւ անվստահելի, մինչ 1915 ի դէպքերը քննարկող այլ պատմաբաններ, կը հաստատեն կատարուածին ցեղասպանութիւն ըլլալը, միանգամայն փաստարկելով օսմանեան աղբիւրներու անվստահելիութիւնը ...

Օսմանեան արխիւները թէեւ հասանելի, սակայն սահամանափակ են, իւրաքանչիւր հետազօտողի կը թոյլատրուի ստանալ օրական միայն 20 փաստաթուղթ: 1913-1918 ժամանակահատուածին վերաբերող այս վաւերաթուղթերու ընդհանուր թիւը կը հասնի շուրջ 250.000 ի : Փաստաթուղթերը քննել ուզող մասնագէտները, իւրաքանչիւր այցելութենէ առաջ, պարտաւոր են լեցնել չորս էջնոց հարցարան մը ...

Մինչ պարբերաբար փճացման ենթակայ, Անգարա գտնուող Թուրքիոյ սպայակոյտին արխիւները անհասանելի են եւ կը պահուին երկրին պաշտպանութեան գաղտնիքներու դարաններուն մէջ, այս պայմաններով անկարելի է գտնել հայերու բնաջնջման հրամանագիրը, հետեւաբար մեզի կը մնայ վերակազմել « փազըլ » ին ձեռք բերուած մասնիկները եւ վերծանել համապատասխան վաւերաթուղթերը ...:

* ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ...



1915ի հայերու ցեղասպանութիւնը պատերազմի կամ անոր զարգացումներուն հետեւանքը չէր:

Ցեղասպանութիւնը օսմանեան իշխանութիւններու ծրագիր մըն էր , լուծելու համար երկար ժամանակ գոյութիւն ունեցող հարց մը , որ գլխաւորաբար հայկական բարեկարգումներու հարցն էր:

Իրականութեան մէջ ամբողջ ցեղասպանութիւնը ծրագրուած էր որպէս ժողովրդագրական քաղաքականութիւն, որ կը նշանակէ թէ հայոց ցեղասպանութիւնը հիմնականին մէջ իրագործուած էր թուաբանական ճշգրտութեամբ եւ կազմակերպուած ու վերահսկուած ներքին գործոց նախարարութեան ներգաղթի բաժանմունքի վիճակագրութեան գրասենեակին կողմէ ...

Այս մասին կեդրոնական փաստարկը այն է, որ հայոց ցեղասպանութիւնը հասկնալու համար պէտք է ամբողջ օսմանեան հողատարածքը բաժնել երեք մեծ շրջաններու. առաջինը՝ Արեւմտեան Անատոլիոյ , երկրորդը՝ Արեւելեան Անատոլիոյ կամ պատմական Հայաստան եւ երրորդը՝ ներկայի Սուրիան, Լիբանանը եւ Իրաքը : Այս վերջին տարածքը հայերուն համար վերաբնակեցման շրջան համարուած էր, Արեւմտեան Անատոլիուն եւ պասմական Հայաստանէն հայերը տեղահանուած էին դէպի այս շրջանները հետեւեալ կանոնով՝ Արեւմտեան Անատոլիոյ մէջ 5 տոկոսի օրէնքը կ'իրագործուէր, ընդ որուն՝ եթէ որեւէ տեղ հայերը մահմետական բնակչութեան 5 առ հարիւրէն նուազ էին, տեղահանութիւն տեղի չէր ունենար : Նոյնիսկ կարգ մը տեղեր հայերը վերաբաշխուած էին նահանգներու մէջ որպէսզի կազմեն բնակչութեան 5 տոկոսը : Պատմական Հայաստանի պարագային կանոնը շատ յստակ է՝ առանց բացառութեան ամէն հայ պէտք է տեղահանուէր, ռուսական սահմանի պատճառով, պարզապէս որովհետեւ այս շրջանները նկատի առնուած էին 1914ի բարենորոգումներու ծիրին մէջ , եւ բնականաբար իթթիհատականները կը վախնային այս ծրագրի իրականացումէն: Երրորդ տարածքին՝ վերաբնակեցման շրջաններու մէջ, 10 տոկոսի կանոնը կ'իրագործուէր, ըստ որուն, հայերու թիւը պէտք չէ անցնէր տեղացի բնակչութեան 10 առ հարիւրը ... այս թիւերը շաբաթական դրութեամբ կը վերահսկուէին ...:

Կարելոր իրականութիւն է նաեւ այն, որ ցեղասպանութեան ընթացքի տեւողութեան ձուլումի կանոնաւոր քաղաքականութիւն կար, որ ունէր չորս բաղկացուցիչ, առաջինը՝ կրօնափոխութիւն, երկրորդը՝ հայ մանուկներու բաշխումը մահմետական տուններու մէջ, երրորդը՝ հայ աղջիկներու բռնի ամուսնութիւն մահմետականներու հետ, չորրորդը՝ սահմանափակ ձուլումի քաղաքականութիւն Սուրիոյ եւ Իրաքի մէջ, այսինքն կ'արտօնէին վերաբնակեցնել հայերու սահմանափակ թիւ մը եւ անոնց չէին դայնար: Այս չորս տարրերը հայոց ցեղասպանութեան տեւողութեան իրագործուած էին նոյնպէս թիւերու վրայ հիմնուելով, օրինակի համար, երբ մահմետականութեան դարձած հայերու թիւը անցաւ իրենց ակնկալածը, չարտօնեցին կրօնափոխութիւնը եւ շարունակեցին հայերը տեղահանել ...

Այստեղ կարելորութեամբ պէտք է արձանագրել, որ ֆիզքական բնաջնջումի եւ ձուլումի միջեւ հաւասարակշռութիւն մը պահելը՝ եղած է ցեղասպանութեան ծրագրին առանցքային գործօնը ...:



*** ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԿԻԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ...**

Եթէ Կորպաչովը իր Կլասթոսթի (հրապարակայնութիւն) եւ Փերեսթոյքայի (վերակառուցում) քաղաքականութեամբ վերջ դրաւ Խորհրդային Միութեան, ապա Հայաստան- Թուրքիա արձանագրութիւնները կոչուած էին վերջ դնելու 1915 ի հայոց ցեղասպանութեան ուղղութեամբ, Թուրքիոյ որդեգրած ժխտողականութեան քաղաքականութեան ... պարզապէս արձանագրութիւնները պիտի նշանակէին այդ քաղաքականութեան փլուզումը, Հրանդ Տինքն ալ կը հաւատար, որ այսպիսով ճանապարհ կը հարթուի պատմութեան հետ կապուած խնդիրներու լուծման համար: Բայց ինչպէս միշտ, այս անգամ ալ, Թուրքիան չներշնչեց սպասուած վստահութիւնը, դեռ ընդհակառակը, իր գործելառճով կը շարունակէ անցեալին պատահածները կրկնելու որոշ ազդանշաններ ցուցաբերել, որուն ցայտուն ապացոյցներէն մէկը՝ «Ցեղասպանութեան անհիմն պնդումներուն դէմ պայքարի համադրման խորհուրդ »ի առկայութիւնն է ...

Արձանագրութիւններուն յաջողութիւնը կարելոք քննութիւն մըն էր թուրքիոյ համար, որուն մէջ ան անգամ մը եւս ձախողեցաւ, որովհետեւ անգամ մը եւս բախելով երկրի սպայակոյտին եւ դիւանակալութեան սուր հակազդեցութեան, գերադասեց շարունակել ուրացումի իր արանդապաշտական քաղաքականութիւնը ...

Թուրքիան ժամանակակից աշխարհին անբաժանելի մէկ մասն է, հետեւաբար միջազգային համայնքին լիարժեքօրէն մաս կազմելու համար, մենք պէտք է ընդունինք պատմութեան մեր սխալները, այլապէս չենք կրնար Եւրոմիութեան, կամ առհասարակ արեւմտեան համայնքին մաս կազմել:

Հայաստանի հանրապետութիւնն ալ իր հերթին, միայնակ չի կրնար ներկայացնել բովանդակ հայութեան շահերը, մանաւանդ մեկնելով այն հանգամանքէն, որ 1915ի հարցը անմիջականօրէն հայ սփիւռքին կը պատկանի, այս պարագային Գերմանիա- Իսրայէլ խնդրայարոյց տարբերակը լաւ օրինակ կը ծառայէ, ցեղասպանութեան անմիջական հետեւանքը հանդիսացող հայ սփիւռքը պաշտօնապէս ներգրաւելու Հ.Հ. ծաւալած համապատասխան գործընթացին մէջ, այնպէս ինչպէս Գերմանիոյ հետ Իսրայէլի կազմած բանակցութիւններու կոմիտէին մաս կը կազմէին հրէական սփիւռքի ներկայացուցիչները ...

Մարդկային անարդարութեան հարթակի վրայ, հայերու եւ թուրքերու խնդիրը միակը չէ, այլ օրինակներու փորձը հաշուի առնելով, յուսալի լուծումներ գտնելու առաջադրանքով, մանաւանդ երկխօսութեան սկզբունքով պէտք է շարունակել համատեղ քննարկումները ...:

*** ՃԱՆԱԶՈՒՄԻ ԵՒ ՀՍՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ...**

Այսօր աւելի քան երբեք յստակ է, որ Թուրքիոյ հանրապետութեան մայր կառոյցը հիմնուած է, քրիստոնէական մշակոյթի վերացման եւ երկրին ոչ-մուսուլման հատուածի ինչքերու բռնագաւթումին եւ իւրացման վրայ ...

Պաշտօնական Թուրքիոյ հայոց ցեղասպանութեան հանդէպ բռնած ժխտողականութեան քաղաքականութեան դիրքը, մեծապէս կ'առընչուի հատուցման խնդիրին, որովհետեւ



Ճանաչումի պարագային, Թուրքիա հարկադրաբար պիտի կանգնի հայերու վնասները հատուցելու անխուսափելի խնդիրին առջեւ ...

Անհնար է հայերու նիւթական կորուստներու անչափելի տարողութեան հաշուեկշիռը երեւակայել ... պատկերացուցէք 1914 ի հայերու ունեցումաձքը, անոր աւելցուցէք հարիւր տարի եւ պահ մը մտածեցէք, որ եթէ հայերը այս տարածքներէն բնաջնջուած չըլլային, այդ հարստութիւնը այսօր ի՞նչ չափերու հասած կ'ըլլար ... կորուստ մը, որ իսկապէս անհնար է թիւերով հաշուել ...

Մեր կառավարութիւնը, նոյնիսկ անհիմն օրէնքներու ստեղծումով զարթեց հայերուն պատկանող անչափելի հարստութիւնները, եւ այժմ ողջ Թուրքիան, մենք, կ'ապրինք այդ թալանին, այդ գողօնին վրայ ... միթէ կարելի՞ է հարցը փակուած համարել, երբ այդ բոլորը գողութիւն էր ...

Այս բոլորին ընդմեջէն կը յստականայ հայերու ցեղասպանութիւնը « թապու » ի վերածելու պատճառը, այլապէս պէտք է ընդունիլ, հանրապետական Թուրքիան կերտած հերոսներու շարքին մարդասպաններու, գողերու եւ թալանիչներու գործօն ներկայութիւնը, հանգամանք մը, որ աւերիչ ազդեցութիւն պիտի ունենայ հանրապետութեան հեղինակութեան եւ իրենց ազգային ինքնութեան մասին թուրքերու ունեցած անխախտ համոզումներուն վրայ ...

Մեր մէջ, ըստ ոմանց Թուրքիան սարսափեցնողը ցեղասպանութեան ճանաչումը չէ, որքան մեծ տարողութիւններու հասնող հատուցումի խնդիրը, սակայն ըստ այս թեզի ընդդիմախօսներուն, առաջին հանգրուանի մը համար, բաւ է, որ հատուցումի տարբերակը զգաբունքայնօրէն ընդունուի, ապա իբրեւ մեծ պետութիւն այս ամօթէն ազատելու միջոց մը գտնելը դառնայ հրամայական պահանջք ...

Այնուամենայնիւ , ճանաչումը առաջին քայլն է, որուն որպէս ընդհանուր կանոն պէտք է յաջորդէ փոխհատուցումը, որ նախ եւ առաջ բարոյական հարց է ... գիտականութեան օրէնքներով սահմանուող որեւէ ճանաչում կամ փոխհատուցում պէտք է ընդունելի ըլլայ թէ զոհերու, թէ մեղքը գործողներուն կողմէ...

Փոխհատուցումը, որ (յաջորդ սերունդներուն գործն է) չի սահմանափակուիր լոկ դրամային գումարով, այլ այն կրնայ ըլլալ ընկերային կամ տնտեսական բնոյթի ծրագիրներու իրականացումով, անկախ այն հանգամանքէն, որ հատուցումը ինչ չափ ու բնոյթ ալ ունենայ, այն խորհրդանշական է եւ երբեք պիտի չհամապատասխանէ կորուստին իրական չափերուն ...

*** ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ... ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ... ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ...**

Ճիշդ պիտի չըլլար, Ցեղասպանութեան ճանաչման պահանջքը մտքի ազատութեան պայմաններով ուսումնասիրել , պարզապէս որովհետեւ այն՝ անցեալին տեղի ունեցած սխալ մը շտկելու հարց է ... ցեղասպանութեան ճանաչման հարցը՝ ոչ թէ « ազատութեան », այլ « արդարութեան » հարց է, եւ որպէս այդպիսին պէտք է քննարկել ...



1915-ը ոչ թէ հողի եւ սահմաններու խնդիր է, այլ մարդու իրաւունքներու հետ կապուած քննարկումներու հարց ...

Տարածքային պահանջքին հետ հայկական ինքնութեան կապը զգացմունքային հենք ունի, որ հայերուն կը յիշեցնէ իրենց հայրենիքը, ուրկէ բռնի կերպով քշուած են ...

Թուրքիոյ տարածքին ցրուած « գաղտնի հայեր » ու մասին եղած հրապարակային բացայայտումներն ու անոնց հարցը քննութեան առարկայ դարձնող գիտաժողովները, կու գան ըսելու, որ մեր մէջ դեռ մեծ թիւով հայեր կան, որոնք ցեղասպանութիւնը յիշեցնողներն են ... « գաղտնի հայեր » ու մասին եղած քննարկումներն ու վերլուծութիւնները, ոչ միայն անվերապահօրէն կը բացայայտեն անոնց ներկայութիւնը երկրի ողջ տարածքին, այլ կը բացայայտեն հայերու նոր տեսակ մը, որ լուսարձակի տակ կը բերէ ընկերաբանական նոր դասակարգի մը գոյութիւնը ...:

Ա՛լ կասկածէ վեր է, որ հայերու ցեղասպանութեան հարցը իրաւական, իրաւաբանական կամ պատմական հարց չէ, այլ զուտ քաղաքական ... Եւ պէտք է ընդունիլ նաե՛ւ որ այս հարցը ողջ թուրքիոյ հարցն է, իսկ Թուրքիան միայն կառավարութիւն չէ, այլ նաեւ հասարակութիւն, որ իր էութեամբ, իր մտածելակերպով եւ հոգեբանութեամբ միատարր չէ, հետեւաբար երկխօսութեան տարբերակը պէտք է պահանջք դարձնել այդ հասարակութեան առողջ տարրերուն միջեւ, այլապէս ինչպէս յուսալ եւ սպասել, որ թշնամի մը օգնութեան ձեռք մեկնէ մեզի ... յուսալի երկխօսութեան մը պարագային ազգային ինքնութիւնները պէտք չէ որոշիչ դեր խաղան, այլ զարգանայ այնպիսի մտածելակերպ մը, որ երկխօսութեան առողջ մթնոլորտի մը ստեղծման նպաստէ ...

Այսօր Թուրքիան կը ձգտի « վերագտնել » իր օսմանեան անցեալը ... Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը փակ եւ պաշտպանողական է, Թուրքիան կը կատարէ այն՝ ինչ որ ՕԹԱՆ-ն ու Միացեալ Նահանգները կը հրահանգեն, հետեւաբար հայոց ցեղասպանութեան 100 ամեակի սեմին , հարցին ակադեմական, գիտական եւ քաղաքական շրջանակներու մէջ տեղի ունենալիք փոփոխութիւն մը, դեռ յոռետեսութեան սահմաններէն չանցնիր, պարզապէս որովհետեւ այդ յիշեալ ոլորտներուն մէջ փոփոխութիւն մը կարելի կը դառնայ միայն այն ատեն, երբ չորս երկիրներու՝ ԱՄՆ-ի, Մեծն Բրիտանիոյ, Իսրայէլի եւ Թուրքիոյ միջեւ գոյութիւն ունեցող քաղաքա-կանութեան մէջ փոփոխութիւն տեղի ունենայ ...:

Փրոֆ. Թանէր Աքչամ, վարչապետ Րէճեփ Թայիփ Էրտողանի եւ փոխ վարչապետ Պիւլենթ Արընչի ուղղած իր բաց նամակով (13 Մարտ , 2010), ուշադրութեան յանձնած էր հետեւեալը՝

« 1915ի հարցը չէր կրնար լուծել անընդհատ կրկնելով 95 տարիներու սուտը ... Եթէ սուտին կրկնութեամբ կարելի ըլլար հարցը լուծել, ապա ձեր աւելի աղմկոտ նախորդները արդէն իսկ յանգած կ'ըլլային լուծումի մը ...

Եթէ պիտի անդրադառնաք 1915ին, ապա « Էրկենեքոնին » եւ յեղաշրջում ծրագրողներուն տուած պատասխանէն տարբեր պատասխան մը պէտք է փնտռէք ... հետեւաբար ձեր



իսլամական արմատները պետք է պրպտեք, գիտնալու համար թէ ուրկէ ծիլ նետած է ձեր կուսակցութիւնը եւ նայիք, թէ անոր արմատները ինչ գործած են 1915ին ...

Թուրքիան չի կրնար իր ապագան կերտել ոճրագործներու հետքերով ...

1915 ին թրքութեան եւ իսլամութեան ճակտին դրոշմուած սեւ բիծի կողքին, 100 տարիներու ուրացումի քաղաքականութեան եւ ոճրագործներու պաշտպանութեան պատճառով, նոյն այդ ճակատին վրայ կ'աւելնայ երկրորդ սեւ բիծ մը եւս ...

Թրքութիւնն ու իսլամութիւնը պետք է փրկենք երեկուան Թալէաթներէն եւ Էնվերներէն, ինչպէս նաեւ այսօրուան Սամասթներէն եւ անոնց ետին կանգնողներէն եւ թոյլ չտանք, որ Էլէկտադներն ու Քիւշիւքները սահմանեն թրքութիւնն ու իսլամութիւնը ...

Այսօր եթէ մեզմէ ոմանք սկսած են ճակատաբաց եւ արժանապատուութեան մնացուկով մը քալել, ապա պատճառն այն է, որ մատնացոյց ըրած ենք Հրանդը սպաննողները եւ զանոնք կոչած ոճրագործներ ... » :

Վաղ թէ ուշ, Թուրքիա պիտի ստիպուի առերեսուիլ իր կասկածելի պատմութեան հետ ...

Եթէ Թուրքիա չի կրնար խօսիլ իր անցեալի ամօթալի փորձութեան մասին, ապա չի կրնար մոռնալ կոշմարի վերածուած այդ անցեալը ...

Սակայն նոյնիսկ ճանաչում-հատուցումով Թուրքիա պիտի չձերբագատուի իր մեղքէն, եւ դեռ աւելին՝ պիտի պարտաւորուի իր սեւ եւ մութ պատմութեան ծալքերը բանալ եւ խոստովանիլ, որ նախ եւ առաջ խաբած է իր իսկ ժողովուրդը ... :

ՄԱԼԲԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հալէպ

ԱԶԳԱՅԻՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Իրարու հետ լեզու գտնել... Ունի՞նք այդ առաքինութիւնը, լայնամտութիւնը, թափանցամտութիւնը, հեզութիւնը... հոգիէ-հոգի եւ սիրտէ-սիրտ կամարուող կապը, ինչ որ



շատ հաւանաբար՝ զիրար անկեղծօրէն սիրելէն կու գայ, զիրար հասկնալէն, զիրար զգալէն կը բխի...: Եթէ ազգի մը զաւակները պիտի չհասկնան զիրար, պիտի բնովէն ու վիրաւորեն զիրար, յայնժամ ինչպէ՞ս կարելի է սպասել որ օտարը հասկնայ մեզ...: Դարէ-դար կուտակուող այս իրարհասկացողութեան, իրարհանդուրժողութեան

ահաւոր պակասն է երեւի նաեւ մեր դժբախտութեանց բուն աղբիւրը...

.....



Մի բուռ ժողովուրդ ենք մնացեր՝ դարաւոր տառապանքներէ, չարչարանքներէ, ցեղասպանութենէ վերապրած.....սակայն դեռ որքա՛ն կոտորակուած, մասնատուած ենք, դեռ որքա՛ն ներքին զգուրտոցներով ենք զբաղած, դեռ որքա՛ն անհասկցող, անհանդուրժող ենք իրար նկատմամբ....եւ այսպէս կը շարունակենք մեր ճամբան, առանց խրատուելու մեր դաժան պատմութենէն, առանց էապէս իրարու հետ լեզու գտնելու....ամէն մէկս՝ իր կեղեւին մէջ պարփակուած, ամէն մէկս իր ԵՍ-ին սպասարկու....Եւ դեռ կան մեր անբուժելի քէներն ու ոխերը, մեր անհաշտ պայքարները....յանուն սին աթոռի կամ աթոռակներու, յանուն սեփական գրպանի, դիրքի, փառքի... Ի՞նչ ունինք արդեօք, զոր չենք կրնար բաժնուիլ...: Տեղին չէ՞ մեծն Յովհաննէս Թումանեանի դիպուկ ախտորոշումը. «Մենք ներսից ենք փչացած....»: Պիտի կարենա՞նք ինքնամաքրուիլ....առանց որուն վստահաբար չիք փրկութիւն:

.....

Որեւէ պետութեան հիմքն ու հենքը Բարոյականութիւնն է, առանց որուն փուլ կու գայ ան՝ վաղ թէ ուշ: Պատմութիւնը՝ վկայ: Բարոյական արժէքներու վրայ ամբօքէն խարսխուած պետութիւնը կրնայ դիմակայել ներքին թէ արտաքին դժուարութիւնները, նոյնիսկ՝ ահռելի թշնամին, քանզի ներքին հզօրութեամբ է ամրապինդ: Միւս կողմէ, անբարոյական դրուածքով պետութիւնը չի կրնար նուաճել իր քաղաքացիներու ներքին միութիւնն ու վստահութիւնը եւ՝ առաջին իսկ ցնցումին դէմ յանդիման, կը քայքայուի, կը փլուզուի ան, հոգ չէ թէ՛ ունենայ նոյնիսկ զօրաւոր բանակ, ուժեղ տնտեսութիւն եւ այլ հնարաւորութիւններ...."Virtus" լատինական բառը կը նշանակէ «առաքինութիւն» կամ «բարոյական արիութիւն»...որ հիմքերու հիմքն է անհատին թէ պետութեան կայացումին, որուն կրողը պիտի ըլլան որոշապէս պետական այրերն ու հասարակութեան անդամները՝ քաղաքացիները....Այլապէս՝ մենք կ'ունենանք խարսխուլ պետութիւն եւ հասարակութիւն....

.....

Մեր Ներքին Ցեցերը....Մինչ արտաքին թշնամին դաժան եղած է մեզի հանդէպ, ամբողջ հայրենիքէ մը մեզ զրկելով, ցեղասպանելով մեզ եւ մշակութասպանութեան սպառնալիքը կախելով մեր գլխուն վերեւ՝ դամոկլեան սուրի նման, քիչ չէ եղած ներքին ցեցերուն գործած եւ գործող աւերը....Ներքին այդ ցեցերը կարելի է կոչել՝ օտարամոլութիւն, ստրկամտութիւն, նախանձ, իրարհանդուրժողութեան պակաս, հատուածամտութիւն, եսամտութիւն....եւ նման արատներ, որոնք պատճառ եղած են որ չկարենանք միաբանուիլ որպէս ԱԶԳ եւ մնանք շարունակ բաժան-բաժան, մսխելով մեր վտիտ ուժերը էապէս մանրուք հարցերու վրայ....

.....

Չեմ սիրեր կուսակցամոլութիւնը, որ ազգի փրկութիւնը կը տեսնէ սոսկ իր կուսակցութեան «փրկարար» գործունէութեանց մէջ..., որ շարունակ կը միտի իր կուսակցութիւնը զօրացնել, զայն թմբկահարել ի վնաս համահայկական մտածողութեան, համահայկական ոգիի ամրապնդման....որ իր կուսակցութիւնը վեր կը դաւանէ ազգէն ու հայրենիքէն, անշուշտ միշտ անոնց անունով խօսելով....Կուսակցամոլութիւնը էապէս հայավնաս է եւ հայակործան...



.....

Ստահակին վերջին ապաւէնը իր հայրենասիրութիւնն է, ըսուած է իրաւացիօրէն...., քանզի այնքան շատ են անոնք, որ երդում-պատառ կ'ըլլան իրենց հայրենասնուէր գործունէութեան համար, ինքնագովութեան գագաթնակէտին հասցնելով իրենց հայրենասիրական ա՛յս կամ ա՛յն գործի փառաբանումը....Բայց եթէ քերես գովաբանուած «հայրենասիրութեան» արտաքին կեղեւը, կը յայտնուի ամենայն յստակութեամբ տուեալ անձին կամ անձերուն եսամոլութիւնը, փառամոլութիւնը..., «Հայրենասիրութեան» պիտակին տակ՝ սեփական փառքը հիւսելու մոլեգին մարմաջը...., մինչդէռ իրա՛ւ հայրենասիրութիւնը լուռ եւ անաղմուկ գործ է, անսակարկ նուիրաբերում, որ կը խորշի գովեստէ, ինքնապարծանքէ, ինքնաթմբկահարումէ....

.....

Արդեօ՞ք ազգովին կազմակերպչական ջիղ չունինք մենք...Որպէս անհատ, երբեմն նուաճեր ենք ամէնէն բարձր գագաթները՝ արուեստի, գիտութեան, գործարարութեան եւ այլ բնագաւառներու մէջ, բայց երբ հերթը հասեր է ԱԶԳԱՅԻՆ-ՀԱԻԱԲԱԿԱՆ կեանքը կազմակերպելու կարեւորագոյն խնդրին, այնտեղ է որ միշտ ալ թերացեր ենք...չենք կրցած ընդհանրական նպատակի մը շուրջ քով-քովի բերել անջատ ԵՍ-երը, ներդաշնակել զանոնք, համադրել մեր կարելիութիւնները, զանոնք հունաւորել այդ նպատակի իրագործման ի խնդիր...եւ տարանջատուէր ենք առանձին անհատներու, առանձին խմբակցութիւններու, առանձին հատուածներու միջեւ, ջլատելով ազգային-հաւաքական ոյժ դառնալու մեր կարողականութիւնը....եւ չկարենալով էապէս ԵՍ-երը վերածել հաւաքական ՄԵՆՔ -ի....

.....

Յոգնած եմ գաղութներու կեանքի նեղմտութիւններէն, ակումբային կեթթոններէն, նեղ-հատուածական մտածելակերպէն, ծառէն անդին անտառը չկարենալ տեսնելու կարճատեսութենէն....Էսթապլիշմենթային կաղապարուած միտքերէն....տեսակ-տեսակ կարծրատիպերէն, որոնք կ'արգելակեն մտքի, հոգիի ազատ թռիչքը դէպի լայնարձակ տարածութիւններ....

.....

ՄԵԾԵՐԸ չեն մեռնիր, անոնք կ'ապրին նաեւ եւ ի մասնաւորի իրենց յետ-մահու կեանքով, քանզի իրենց կերպարը, վաստակն ու գործը կը դառնան ներշնչարան, ոգեշնչման աղբիւր իրերայաջորդ սերունդներուն....Հոգեմտաւոր ժառանգ, ոգիի դարբնոց որպէս, անոնք կ'ապրին յար յաւիտեան, մինչեւ այն ատեն որ կա՛յ, կ'ապրի զիրենք ծնող ժողովուրդը...: Պահ մը կրնա՞նք երեւակայել, թէ ի՞նչ պիտի ըլլար հայ կեանքը, եթէ չըլլային մեր Մեծերը, որոնց վսեմ օրինակին կը դիմենք յաճախ, մանաւանդ մեր դժուարին պահերուն....Մեծերը մեր ուղեցոյց փարոսներն են, որոնց լոյսը անշէջ է....

.....



Հայրենասիրութիւնը չի կրնար արգասիքը ըլլալ ինքնախաբկանքի...Ընդհակառակն, հայրենիքի ցաւոտ խնդիրները քաջութեամբ բարձրաձայնելն ու դիմագրաւելը, անոնց ամոքման ի խնդիր դեղ ու դարման որոնելը, անոնց վերացման համար ցաւատանջ մաքառիլն ու պայքարիլը ճշմարիտ հայրենասիրութեան արտայայտութիւն են որոշապէս...Անհատներ ու հաւաքականութիւններ կը յառաջդիմեն, եթէ կարենան իրենց մէջ բարոյական ոյժ գտնել՝ անաչառօրէն քննելու իրենց սխալները եւ՝ զանոնք քայլ առ քայլ ուղղելու աննկուն կամք ցուցաբերել...Ինքնախաբկանքը ճահճացում է լոկ....

.....

Մեր ժամանակները կը յատկանշուին յատկապէս ձեւի, արտաքին տեսքի, ծափ ու ծնծղայի...սին ու փուճ կարեւորութեամբ: Նոյնն է պարագան հայ կեանքին, ուր նոյնիսկ մեր հաւաքական ցաւն ու պահանջատիրութիւնը կարծէք դարձեր են ա՛լ ծիսակատարութեան նման բան, զոր կը կատարենք տարին մէկ անգամ, եւ յետո՛յ...Հարիւր տարի ետք Յեղասպանութեան սեւ թուականէն, բացի Յեղասպանութեան ճանաչման գործընթացէն, ի՞նչ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ մշակած ենք ազգովին, արդիւնաւէտութեամբ հետապնդելու մեր սրբազան ԴԱՏԸ...: Ձեւն ու ձեւականութիւնը էական տեղ գրաւած են, յայտնապէս, մեր անհատական եւ հաւաքական կեանքէն ներս, մոռացութեան տալով մեր հարցերուն բուն բովանդակութիւնը, ցուցադրականէն վեր ու անդին...նոյնիսկ երբ հարցը կը վերաբերի Յեղասպանութեան եւ Հայրենագրկումի լրջագոյն խնդիրներուն...

.....

Մշակութասպանութիւնը եղաւ հաւանաբար ամէնէն ահաւոր հետեւանքը Յեղասպանութեան...որուն մասին այնքա՛ն քիչ կը խօսինք, մեր շեշտը տեսաբար դնելով Յեղասպանութեան ճանաչումի ա՛լ հնամաշ դարձած յանկերգին վրայ...: Եթէ ամբողջ աշխարհը ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը, պիտի կարենա՞յ ատիկա փրկել արեւմտահայ մշակոյթը, պիտի կարենա՞յ նոր կեանք ու շունչ տալ արեւմտահայերէնին, անով ստեղծուած Հայ Բառ ու Բանին, դպրութեան ու գրականութեան, մշակոյթին..., երբ տակաւ կը խամրի արեւմտահայերէն լեզուն մեր նոր սերունդի շուրթերուն վրայ, երբ տակաւ կը փակուին հայ դպրոցներ ու թերթեր, երբ տակաւ համաշխարհայնացումը՝ որպէս նոր եաթաղան, կը սպառնայ՝ ազգային մեր ինքնութեան, նոյնիսկ հայրենագրկեալի գիտակցութեան՝ Սփիւռքի ձուլարաններուն մէջ....

.....

Տարագիր մարդը միայն կրնայ զգալ համակ խորութեամբ հայրենի տան կարօտը, երբ օտար ափերուն վրայ՝ ամէն օր, կ'ապրի օտարութեան շունչը, ինքնութեան տազնապը, «օտար» կամ ոչ բնիկ տեղացի կոչուելու խարանը..., երբ երկփեղկուած կը զգայ ան իր էութեան խորքին մէջ..., որքան ալ բարեկամ երկրի մէջ հանգրուանած ըլլայ ան...Օտարը միշտ ալ օտար կը մնայ...Այս է դառն ճշմարտութիւնը, իսկ օտարին տունը երբեք չի կրնար դառնալ հայրենի տուն....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՓԵՏՐՈՒԱՐ- ՄԱՐՏ – ԱՊՐԷԼ 2015

Անցուդարձ

Բացառիկ Պատարագ Վատիկանի Ս. Պետրոս Մայր Տաճարին Մէջ Ցեղասպանութեան Զոհերու Յիշատակին

Եւ Ս. Գրիգոր Նարեկացիի Տիեզերական Եկեղեցոյ Վարդապետ Հռչակուելուն Առթիւ

Փրանկիսկոս Պապը Հայոց Չարդերը Որակեց Ցեղասպանութիւն



Կիրակի Ապրիլ 12ին, Վատիկանի Ս. Պետրոս տաճարը բերնէ բերան լեցուն էր աշխարհի չորս ծագերէն ժամանած հայորդիներով, որոնք փութացած էին Հռոմ, մասնակցելու Ս. Պետրոսի կամարներուն տակ կատարուելիք սրբազան պատարագին: Առտու կանուխ, բոլորը իրենց յատուկ հրաւերը ձեռքին, մուտքին շատ երկար պոչ բռնելէ եւ ապահովութեան խիստ քննութենէ անցնելէ ետք, կը գրաւէին իրենց տեղերը Ս. Պետրոս

մայր տաճարի շէնքերու շուրջը հսկայական կամարներուն տակ: Հարաւային Ամերիկայէն մինչեւ Ռուսաստան, Միջին Արեւելքէն, Ափրիկէէն, Հայաստանէն, բոլորը ժամադրուած էին Հռոմ: Հայ Կաթողիկէ եւ Առաքելական եկեղեցիները իրենց կաթողիկոսներով ներկայ էին, Հայաստանի Հանրապետութիւնը՝ նախագահական մակարդակով:

Այս բացառիկ արարողութեան առիթով, հրատարակուած էր օրուան պատարագի խօսքերը այնպէս ինչպէս պիտի ըսուէին հայերէն բաժիններով: Լիբանանի Հայերու խումբ մը շատ զեղեցիկ գաղափարը ունեցած էր նաեւ հանրութեան բաժնելու սպիտակ վզկապ մը, որ ներկաներուն կու տար միատարր ընտանիքի մը տպաւորութիւնը:

Պապը, առաւօտեան ժամը 9ին, իր հայ հոգեւոր եղբայրներով, հիւրերով, հանդիսաւոր մուտք գործեց Ս. Պետրոս մայր տաճարէն ներս: Կաթողիկէ եկեղեցոյ ծիրանաւորներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, մայրապետներ, դպիրներ եւ երգչախումբի անդամներ լեցուցած էին խորանը: Հայ Կաթողիկէ հոգեւոր դասը պատարագի հանդերձանքով նստած էր: Հայաստանի Հանրապետութեան նախագահը տեղ գրաւած էր կառավարութեան կարգ մը անդամներուն հետ:



Տեղական եւ միջազգային լրատու միջոցներու բազմաթիւ ներկայացուցիչներ ուղղակի սփռումով եւ զեկոյցով կը մեկնաբանէին ու կ'անդրադառնային այս եզակի պատարագին: Կաթողիկէ Սրբազան Քահանայապետին ձեռամբ պատարագը պիտի

մատուցանուէր Յեղասպանութեան զոհ գացած հայ նահատակ ժողովուրդին եւ միաժամանակ «Տիեզերական եկեղեցոյ դոկտոր» պիտի հռչակուէր Ս. Գրիգոր Նարեկացին: Պապը բացումը կատարեց ընդգծելով օրուան կարեւորութիւնը: Պահը պատմական էր նաեւ անով, որ Հռոմի Քահանայապետը՝ իր այդ տիտղոսով, Հայոց ջարդերը առաջին անգամ ըլլալով հրապարակաւ որակեց ցեղասպանութիւն, դատարարտեց բոլոր ցեղասպանութիւնները որոնք գործուած են եւ տակաւին կը գործուին ընդդէմ անմեղ ժողովուրդներու:

Հակառակ անոր, որ նախքան պատարագը յիշուեցաւ որ պէտք չէ ծափահարել, մէջ ընդ մէջ ծափահարութիւններ կը լսուէին խանդավառ եկեղեցականներու, ծիրանաւորներու եւ ժողովուրդին կողմէ:

Ս. Պետրոս հսկայ տաճարին կամարներու սահմոկեցուցիչ կայսերականութիւնը մարդ արարածը կը կլանէ, կը փոքրացնէ: Միայն մարդկային սրտաբուխ ջերմ խօսքը, երաժշտութիւնը կը մեղմացնէին անոր ահաւորութիւնը: Եւ ներկաները ապրեցան այդ պահերը: Հայկական պատարագի կարգ մը մեղեդիներ հնչեցին, ինչպէս նաեւ դուդուկը: Պապը իր հեգուծեամբ, աղօթքի կեդրոնացումով ու իրեն յատուկ թափանցիկ խօսքերով մեծ սէր ու համարում կը յայտնէր Հայութեան նկատմամբ:

Խորանի կամարակապ եւ ոլորապտոյտ սիւներէն աջակողմեանին պատուանդանին վրայ զետեղուած էր Ս. Գրիգոր Նարեկացիի նկարը, ձերմակ վարդերու փունջերով զարդարուած:

Հաղորդութենէն ետք, յաւարտ պատարագի, խօսք առաւ Հայ կաթողիկէ համայնքի Կաթողիկոս-Պատրիարք Ներսէս-Պետրոս ԺԹ., որ իտալերէնով ներկայացուց Նարեկացիին կեանքը: Ապա, հասաւ Ս. Գրիգոր Նարեկացիին Տիեզերական եկեղեցոյ վարդապետ հռչակելու արարողութեան պահը: Այս առթիւ, Ներսէս-Պետրոս ԺԹ. յատուկ իւղանկար մըն ալ նուիրեց Պապին:



Յետոյ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան կարգը, նուիրուած՝ Յեղասպանութեան զոհերու յիշատակին, որմէ ետք Հայ Առաքելական եկեղեցոյ երկու Կաթողիկոսները խօսք առին Ս. Պետրոս տաճարի բեմէն. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը յիշեց վերածնած հայրենիքը իբր հայութեան պաշտպան ու անոր գոյատեւումին ու պայքարին երաշխիք: Իսկ Արամ Ա. Կաթողիկոս, իրեն յատուկ ճարտասանութեամբ, առանց նօթեր կարդալու թուղթէն, երեք կէտերով ներկայացուց իր խօսքը: Նախ յիշեց մարտիրոսութիւնը՝ իբր եկեղեցոյ առաքելութիւնը վերանորոգող ուժ: Յեղասպանութիւնն ալ կը հանդիսանայ վերանորոգ ուժ: Երկրորդ՝ եզականացուց Ս. Գրիգոր Նարեկացիի աւանդը, նշելով որ ընդհանրապէս եկեղեցոյ հայրերը խօսած են Աստուծոյ մասին, Նարեկացին եղած է այն սուրբը որ խօսած է Աստուծոյ հետ, նշելով, թէ հայկական աւանդութեան մէջ անոր Մատեանը հանդիսացած է երկրորդ Աստուածշունչ մը: Գալով երրորդ կէտին, բոլորին զարմանք պատճառելով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը խօսքը դարձնելով անզերէնի, յայտնեց, որ Յեղասպանութեան խորքին կանգնած է արդարութեան հարցը: Արդարութիւնը երկնային պարգեւ մըն է, առ այդ պէտք է սրբագրուի,



Յեղասպանութիւնը ճանչցուի եւ հատուցանուի: Յիշեց նաեւ Սիսի կաթողիկոսութիւնը, որ դեռ կը մնայ գրաւեալ՝ թուրք պետութեան կողմէ:

Նշենք նաեւ, որ երկու Կաթողիկոսներն ալ իրենց խօսքին մէջ յիշեցին 1915ին Բենեդիկտոս ԺԵ. Պապին աշխոյժ միջամտութիւնը,

որպէսզի դադրին Հայոց ջարդերը:

Պէտք է ըսել, որ այս ամբողջ շաբթուան ընթացքին Հռոմը եւ Իտալիան կ'ապրէին հայկական օրեր: Հայաստանի Հանրապետութեան նախագահին պետական այցելութեան կողքին, Հինգշաբթի Ապրիլ 9ին տեղի ունեցաւ Պապի յատուկ ընդունելութիւնը Հայ կաթողիկէ եպիսկոպոսներու: Շաբաթ Ապրիլ 11ին, Նափոլիի մէջ յատուկ արարողութեամբ զետեղուեցաւ խաչքար մը տեղոյն Ս Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ: Նաեւ, Ապրիլ 12ի երեկոյեան Հռոմի մէջ տեղի ունեցաւ Քոյր Արուսեակի որբանոցի հայ կաթողիկէ մանուկներու երգչախումբին համերգը:

Աղբիւր՝ ՆՈՐ ՅԱՌԱՋ

Յօդուածներ

Հայոց Ցեղասպանութեան Յուշագրութեանց Վաւերագրողը Յարութիւն Իսկահատեան Արմէն Ա., Պէյրութ, 18 Մարտ 2015

Մօտէն ճանչնալէս ետք Յարութիւն Իսկահատեանը, լաւ հասկցայ այն դրդապատճառները, որոնք յիսուն տարեկան հասակէն ետք մղած են աւելի մօտէն հետաքրքրուելու Հայոց Ցեղասպանութեան մասին: Ան թէւ պատմաբան մը չէ, ոչ ալ բանասէր, սակայն ցարդ երեք հարիւրէ աւելի յուշագրական գիրքեր կարդալով ուսումնասիրած է Հայոց Ցեղասպանութիւնը: Իսկահատեանի կեանքի ասպարէզը եղած է քաղաքաշինական



ճարտարագիտութիւնը: Միայն վերջին տասը տարիներուն է որ ան նուիրուած է Հայոց Ցեղասպանութեան ուսումնասիրութեանց: Ինք կը պատմէ թէ իր հայրական մեծ մայրը ինչպէս իրեն փոխանցած է հայոց բռնագաղթի դրուագները՝ Կիլիկիոյ Կարս Պազար ասանէն մինչեւ Մուսուլ եւ ապա ողջ վերադարձ դէպի Ատանա: Այդ դրուագները ան գրի առած ու հրատարակած է իր «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան- Դ. Գիրք»-ին մէջ:

Իսկահատեանի մեծ հայրը՝ Կարապետ Իսկահատեան, իր եղբոր Փանոսի հետ, բռնագաղթի հրամանին չէ ենթարկուած ու Ամանոսի Կեաւուր Տաղլարը կոչուած լեռներուն վրայ թուրքերուն դէմ երկու տարի զէնք բարձրացուցած է: Կարապետ ապա զէնքը ձեռքին գաղթած է դէպի հարաւ եւ անցնելով Երուսաղէմէն հասած է մինչեւ Փոք Սայիտ: 1919-ի սկիզբը ան Ատանա վերադառնալով ամուսնացած է Մարիամ Էքմէքճեանի հետ: Այս եւ ուրիշ հազարաւոր դրուագներ շատ ազդած են Յարութիւնի հոգեբանութեան վրայ եւ ան հաստատ որոշում տուած է ի մի հաւաքելու զանոնք ու հատորներով հանրութեան հրամցնելու: Յարդ հրատարակուած են հինգ հատորներ: Արդէն պատրաստ է վեցերորդ հատորը: Իսկահատեան կը շարունակէ ուսումնասիրել ու հաւաքել:

Յարութիւն Իսկահատեան կ'ըսէ թէ յուշագրութիւնները վաւերագրական բնոյթ ունին, ուստի անոնք Հայ Դատի պաշտպանութեան գծով իբր փաստ կրնան ծառայել միջազգային դատարաններու առջեւ: Ան յուշագրական հաւաքումի իր գործին մէջ անպայման կը ներառէ օտար կամ ոչ հայ ականատես վկաներու յուշերը: Իսկահատեան նոյնպէս կ'ընդգրկէ իր գործերուն մէջ վիպականացած յուշագրութիւններ, որոնք հիմնուած են իրական կեանքի դրուագներու վրայ: Ընդհանրապէս ան կը կարդայ հայերէն, արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն յուշագրութիւնները, ինչպէս նաեւ թարգմանութիւններ:

Հայոց Ցեղասպանութեան յուշագրութիւններուն մէջ կարեւոր տեղ կը գրաւեն նաեւ հերոսամարտերը: Թուրքին գործած ոճիրներուն իբր բնական հակազդեցութիւն, շատ մը



վայրերու մէջ հայեր ծառացած են թուրք թշնամիին բռնակալութեան դէմ: Անոնք զենք բարձրացնելով իրենց գոյութիւնը պահած կամ նահատակուած են: Իսկահատեան հերոսամարտերն ալ կ'ընդգրկէ իր գործերուն մէջ: Վանի, Ջէյթունի, Եղեսիոյ, Հաճընի, Շապին Գարահիսարի, Այնթապի-1921, Կարս Պագարի-1909, Մոխրաբերդի եւ այլ քաղաքներու ու ւանաներու 1895-ի, 1909-ի եւ 1921-ի հերոսամարտերը ընդգրկուած են Յարութիւն Իսկահատեանի գործերուն մէջ, յաճախ մէկէ աւելի յուշագրութիւններու ընդմէջէն: Ընդգրկուած են նաեւ գոյապայքարներ, ինչպիսիք են Ազ Տաղի եւ Չորք Մարգպանի գոյապայքարները:

Յարութիւն Իսկահատեան իր ուսումնասիրած յուշագրութիւններուն մէջ նկատած է զուգահեռներ, որոնք «փաստագրական տուեալներ» վերնագրելով զետեղած է իր գիրքերուն



առաջին էջերուն վրան, երբ նոյն անձը կամ նոյն դէպքը յիշուած է իրարմէ բոլորովին անկախ երկու կամ աւելի յուշագրող հեղինակներու գործերուն մէջ: Իսկահատեան յաւակնութիւնը չունի յայտարարելու թէ իր կատարած եւ կատարելիք գործը ամբողջական է: Ընդհակառակն, ան միշտ կը քաջալերէ ուրիշները որ նոյնպէս Մեծ Եղեռնի յուշագրութիւններու հաւաքման գործին լծուին: Ան միշտ փափաքած է ականատես վկաներու եւ անոնց յաջորդող սերունդներու վկայութիւնները ի մի տեղ տեսնել:

Յարութիւն Իսկահատեան բազմաթիւ յուշագրութիւններու ամփոփումներուն մէջ, Հայաստանի եւ Կիլիկիոյ քաղաքներուն, ւանաներուն եւ գիւղերուն մասին պատմական եւ աշխարհագրական տեղեկութիւններ կու տայ, ըստ կարելւոյն:

Հայոց Ցեղասպանութեան մասին գրոյցի մը ընթացքին ան կը յիշէ հետաքրքրական երեւոյթ մը, որ մեծ տարբերութիւն կը նկատուի դիմադրող հայուն եւ ենթարկուող հայուն ճակատագիրներուն միջեւ: Ան նկատած է թէ ընդհանրապէս այն հայը, որ դիմադրած է կամ հնարագիտութեամբ փախուստ տուած է վտանգէն ու չարիքէն կամ բանտէն, ողջ մնացած է, եւ նոյնիսկ իրեն հետ փրկած է ուրիշներու կեանքը, իսկ ենթարկուող հայուն ճակատագիրը բացարձակ մեծամասնութեամբ վերջ գտած է ողբերգութեամբ: Իսկահատեան կ'ըսէ թէ զինեալ դիմադրութիւնը եւ պայքարը մեծ դեր խաղցած են հայոց գոյատեւման մէջ:

Յարութիւն Իսկահատեան այսպիսով իր լուման ներդրած կ'ըլլայ Հայոց Ցեղասպանութեան իրողութեան վաւերագրման եւ հայկական պահանջատիրութեան խթանման:

Յաջողութիւն եւ յարատեւութիւն կը մաղթենք մեր հայրենակից Յարութիւն Իսկահատեանին:

Keghart.com